

ՕՐԱԳՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

1862

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԳՆԱՑՔ.

ԱՄՍԱՑԻՑ 6.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

	Եր.
ԱՆԿԱՐԾԵԼԻ ՊԱՏԱՀՄՈՒՆՔ ՎԵՐՋԻՆ ԻՒՆ ՍԵՐՐԱՋԻ. Ս. Նազարեանց	241 — 280
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ. Ռուբէն Հաճան-Ջալալեանց . . .	281 — 282
ՆԱՄԱԿ ԱՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՂԸ. Գարբիէլ Տէր Յովհաննիսեանց . .	283 — 286

ՍՄՈՒԿՎԱ,

ВЪ ТИПОГРАФІИ ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.

1862.

ՅՈՒՆԻՍ 1862 ԹՈՒԱԿԱՆԻ·

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ·

ԱՆԿԱԽԱԾԵԼԻ ՊԱՏՃԱՌՄՈՒՆՔ

ՎԵՐՋԻՆ ԻՐՆ ՍԵՐՐԱՋԻ·

(ԻՒրՅ Շաաօքրքան Գբանաքաօո—)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՀԵՂԻՆԱԿԻ·

Վերջին Իրն Սերրաջի անկարծելի պատահմունքը դրած էին հանարեա թէ քսան տարի յառաջ· այն նկարագիրը Պանիացոց կեանքի, որ ես գծագրել եմ, ըստ բաւականին բացատրութեամ թէ ինչու այս պատմութիւնը կարող չէր տպագրուիլ Պայսերական կառավարութեան օրերում: Պանիացոց ընդդիմութիւնը Լօնաապատէին, մի զինաթափ ազգի ընդդիմութիւն այս տիրապետողաց, այն միջոցին յարուցանուամբ Հոգեոանդն հիացք բոլոր սրտերի մէջ որ կարող էին դէպ ի գութ շարժուիլ մեծամեծ անձնուիրութիւնների և ազնիւ զրկանքի օրինակներով: Սարագոսայի աւերակները ծխումէին դեռ էս, և Յինսուրական ատեանը չէր թոյլ տալու գովասանութիւնք, ուր իրաւացի գտանելու էր մի ծածուկ կարեկցութիւն անթագդներին: Եւրոպայի հին բալքերի

նկարագիրը, մի այլ ժամանակի փառքի յիշատակները, այլև մեր առաւել փառաւոր միապետներից մինի պալատի յիշատակը նոյնքան սակաւ ախորժ լինելու էին ցենսուրական ատենին, որ ալրդէն սկսել էր ապաշաւել, որ թոյլ էր տուել ինձ այնքան յամառ խոսել հին միապետութեան, և մեր հօրերի կրօնի վերայ. այս մեռածները, որ ես անդադար կանչումէի նոցա գերեզմաններից, տալիս էին շատ ու շատ մտածելի նիւթ կենդանիներին:

Հատ անգամ տեղատուութեան նկարագիրների մէջ որ և իցէ տպեղ անձնաւորութիւն, այն խորհրդով, որ աւելի ազդողութիւն տան միւսերի գեղեցկութեանը. այս պատմութեան մէջ ես կամեցած եմ պատկերացուցանել երեք մարդ հաւասարապէս վսեմական բնաւորութեամբ, բայց ոչ դուրս գալով բնութեան կարգից, այլև սխալների հետ միասին պահպանելով և բոլորը ու կանխամուտ մոլար կարծիքները իւրեանց աշխարհի: Ակն մարդու բնաւորութիւնը նկարուած է այդ տեղ նոյնպիսի համեմատութեամբ: Գոնեայ պիտոյ է կեղծիքական աշխարհը, երբ որ մեք մտքով յափշտակվումենք դուրս մէջ, մատուցանել մեզ իրական (ստոյգ) աշխարհի փոխարէնը:

Ասանց դժուարութեան կը նկատէ ընթերցողը, որ այս պատմութիւնը է գործ մի մարդու որ զգացել էր աքսորանքի դառնութիւնը, և որի սիրտը բոլորվին պատկանումէ իւր հայրենիքին:

Ես անմիջաբար տեսութեամբ քննել ու նկարագրել եմ կեղպալանքը Գրիմոդայի և Ալհամբրայի և այն մզկիթի [1]) որ յեղափոխել է եկեղեցի, որ չէ մի ուրիշ բան, եթէ ոչ Կորդովայի կաթողիկէն: Ուրեմն այս նկարագրութիւնքը են միայն մի տեսակ յաւելուած իմ «Անապալհագրութեան» սոյն այս տեղի վերայ:

«Պադիքսից գնացի ես դէպ ի Կորդովա. ես հիացքով քննեցի մզկիթը որ այսօր կացուցանումէ այս քաղաքի կաթողիկէն: Ես շրջեցայ հին Լաբիրինթոսի մէջ, ուր բանաստեղծքը ամփոփել էին երջանկութիւնը: Ես վեր ելայ մինչև Ընդարձակ և վերադարձայ իսկոյն տեսանելու Գրինադան: Ալհամբրան երևեցաւ ինձ արժանի նկատողութեան և գինի Յունաստանի տաճարներին: Գրինադայի

---

[1]) Ինչպես մեր հայերէնում՝ նոյնպես և Եւրոպացոց լեզուներում զանազան կերպով խանգարուել է բուն արաբական բառս մասջիդ կամ մասջէդ (պաշտօնատեղի). դորանից հայք շինեցին մզկիթ, աշխարհաբառում՝ մեկիթ, որ մօտենումէ արմատական խօսքին. Ֆրանսիացիք մոսկե, Գերմանացիք մոք:

ձորը զմայլեցուցիչ է և շատ նման Պալատայի ձորին. հասկանալի է, որ Մաւրիտանացիք ցաւումեն մի այդպիսի աշխարհի կորուստի վերայ» (Ժանապարհորդութիւն Շատօբրիանի, փարիզից դէպ ի Երուսաղէմ. վեցերորդ և վերջին մասն)։

Երբ որ Բօաբդիլը, վերջին թագաւորը Գրենադայի, ստիպուած էր թողուլ և հրաժարուիլ իւր նախահարց թագաւորութենից, նա դադար առաւ Պադուլ սարի կատարի վերայ։ Այս բարձրաւանդակից կարելի էր նկատել ծովը, ուր անբաղդ թագաւորը պատրաստվումէր նաւ նստել, ուղևորվիլ դէպ ի Աֆրիկա. նկատելի էր նոյնպէս Գրենադան, գետերը Վեգա և Քսենիլ որի եղերքի վերայ կառուցած էին Ֆերդինանդոսի և Իզաբելլայի վրանները։ Բօաբդիլը տեսանելով այս գեղեցիկ աշխարհը և մրտենիքը որ դեռ ևս այս տեղ ու այն տեղ նշանակումէին Մուսուլմանների գերեզմանքը, սկսաւ արտասուել։ Սուլթանուհին Այիշա, նորա մայրը, որ ուղեկից էր նորան դէպ ի աքսոր մեծամեծների հետ որ միանգամ կացուցանումէին նորա թագաւորական պալատը, ասաց նորան. «Այժմ արտասուիր դու իբրև կին մի թագաւորութիւն որ դու չկարողացար պահպանել իբրև տղամարդ»։ Նոքա ցած իջան սարից և Գրենադան յաւիտեան չքացաւ նոցա աչքից։

Սպանիայի Մաւրիտանացիք որ իւրեանց թագաւորի անբաղդութեանը բաժանորդ դառնում եցան, ցրուեցան դէպ ի Աֆրիկա։ Ջեզրի և Գոմել ցեղերը տուն ու տեղ հաստատեցին իւրեանց համար ֆեց թագաւորութեան մէջ, որ տեղից շատ աւելի հեռ էին նոքա։ Վանեգա և Ալաբէ ցեղերը դադարեցան ծովի եզրում, սկսեալ Օրանից մինչև Ալջեր. վերջապես Իբն Սերրաջեանքը օթևանք հաստատեցին Թունիսի շրջակայքում։ Նոքա կառուցին մի գաղթաշէնք քարկեդոնի հանդէպ, որի բնակիչքը մինչև այսօր պանծանում են Աֆրիկայի Մաւրիտանացիներից իւրեանց բարքի վայելչութեամբ և իւրեանց օրէնքի մեղմութեամբ։

Այս գերդաստանքը տարան իւրեանց նախնի հայրենիքի յիշատակը դէպ ի նորաշէն հայրենիքը։ Գրենադան միշտ կենդանի էր նոցա յիշողութեան մէջ, մայրերը նորա անունը կրկնումէին իւրեանց տակաւին ծծկեր մանուկներին։ Նոքա օրօրումէին երեխայքը, երգելով տաղեր Զեզրիների և Իբն Սերրաջների վերայ։ Ամենայն հինգ օրամէջ աղօթումէին մզկիթում, երեսը դարձուցանելով դէպ ի Գրենադա։ Կարգումէին Աստուած, որ նա դարձուցանէ իւր ընտրեալներին այս երկիրը փափկութեան։ Ի զուր Լոտոփագների (լոտոտակեր ազգի) աշխարհը մնաւցանումեր աքսորականներին իւր պտուղները, ջուրերը, կանաչութիւնը, իւր շողշողուն արևը։ Կորչ ուր որ[1]) հեռի չկային ոչ ախորժելի պտուղներ, ոչ պարզ աղբիւրներ,

---

[1]) Աշտարակները մի պալատի, Գրենադայի մէջ։

ոչ թարմ կանաչութիւն, ոչ մի արև արժանի տեսանելու։ Եթէ ցուցանուէին որ և իցէ աքսորականին Բագրատայի դաշտավայրը, նա շարժումէր գլուխը և հառաչելով ձայն էր տալիս. «Գրենադա, ո՜հ Գրենադա»։

Իբն Սերրաջը մանաւանդ պահպանումէին իւրեանց հայրենիքի մասին շատ ու շատ քնքուշ և հաւատարիմ յիշատակներ։ Նոքա մանու չափ տրտմութեամբ թողել էին իւրեանց փառքի տեսարանը և այն ծովեզերքը, որ նոքա այնքան յաճախ հնչեցուցել էին այսպիսի զինուորական աղաղակով. «Պատիւ և Սէր»։ Նոքա չկարողանալով այնուհետև բարձրացնել նիզակը անապատների մէջ, և ոչ իսկ ծածկել իւրեանց գլուխը սաղաւարտով մի գաղթաշէնքի մէջ, որ բաղկանումէր երկրագործներից, նուիրել էին իւրեանց անձը բժշկական խոտերի ուսումնասիրութեանը, մի պաշտօնի, որ պատուելի էր Արաբացոց մէջ նոյնչափ, որչափ զինուորական արուեստը։ Այսպէս, այս ցեղը պատերազմողների, որ մի ժամանակ հասուցանումէր վէրք, այժմ զբաղուած էր նոցա բժշկութեան արուեստով։ Այո, այս մասին պահել էին նոքա մի բան իւրեանց առաջին հասկացողութենից. պատճառ, ասպետը շատ անգամ պատումէին թշնամու ստացած վէրքը որ ինքեանք էին հասուցել նորան։

Խուղը այս գերդաստանի որ մի ժամանակ ունէր արքայական ապարանք, էր զետեղած միւս աքսորականների գիւղի մէջ, Մամելիք սարի ոտքում։ Նա շինած էր Քարկեդոնի նոյն իսկ աւերակների մէջ, ծովի եղերումը, այն տեղ, ուր սուրբ Լուդովիկոսը մեռաւ աւազի մէջ, ուր և այժմ տեսանումեն մի մահմետական առանձնակեաց։ Խրճթի պատերի վերայ ամրացուցած էին առիւծամորթից շինած վահաններ որ կրումէին դրոշմած մի կապտագոյն յատակի վերայ երկու վայրենի կերպարանք, մի մի լախտ ձեռներում խորտակելով մի քաղաք։ Այս նկարացոյցի չորս կողմ կարդացվումէին այսպիսի խօսքեր. «Այո ի՛ւր բան է»։ Իբն Սերրաջների զէնքը և նկարացոյցը էին նիզակներ սպիտակ ու կապոյտ դրօշներով զարդարած, աղեւրնօսք, պատմուճանք հատուածաւոր աղասից, որ զրած էին վահանների մօտ և շողշողումէին կեռ սրերի և դաշնակների մէջ։ Այլև տեսանելի էին այս տեղ ու այն տեղ կախ տուած զինուորական ձեռնոցք, սանձերի երախակալք, պատուական քարերով զարդարած, լայն ասպանդակներ արծաթից, երկայն թուրեր, որոց պատեանը ասղնագործած էր արքայազն աղջիկների ձեռքով, և ոսկեզէն կօշկախնամանք որ Խղեօլտները, Ջենիեվրեանքը, Օրիանքը մի ժամանակ հագցնումէին քաջ ասպետների։

Այեղանների վերայ, այս փառքի նշանների ոտքում զրած էին յաղթական նշաններ մի խաղաղաւէտ կեանքի. սոքա էին բուսականներ, Աղլաս սարի կատարի վերայ և Սահարայի անապատում ժողոված. շատերը դոցանից բերած էին այն Գրենադայի դաշտավայրից։ Ոմանք ձեռնտու էին թեթեւացնելու մարմնաւոր ցաւերը, միւսերը պիտի ազդէին մինչև հոգեկան ա-

ղէպքի վերայ։ Իրն Սերրաջքը պատվոմէին մանաւանդ այն դեղերը որ սպասաւորումէին մեղմելով նոցա անօգուտ ախտոսանքը, ցրուելով այն խելագար երազները և յոյսերը բարեբաղդութեան, որ միշտ ծնանումեն և միշտ ուռնայնանումեն։ Թպղց ցաւելի է ասել, որ այս դեղորայքը ունէին ներհակ ներգործութիւնք, և շատ անդամ հայրենիքի մի ծաղկի անուշահոտութիւնը էր մի տեսակ թոյն այդ երևելի աքսորականների համար։

Ութսուն տարի անց էին կացել Գրենադայի առմանից յետոյ։ Այս կարճ ժամանակամիջոցի մէջ Իրն Սերրաջքը մեռած էին մի նոր կլիմայի ազդեցութեան ներքոյ, մի թաւիշաւական կեանքի պատահարներից և մանաւանդ սրտի ցաւից, որ ծածկապէս փորումէ մարդոս կարողութիւնների տակը։ Մի հատ շաւաւիղ մնումէր այս հնչակաւոր ազգատոհմի բոլոր յոյսը։ Անունս Իրն Համեդ կրումէր այն Իրն Սերրաջը որին պարտաւորել էին Զեգրիքը, որպէս թէ մեղրնցուցել էր (ճանապարհից հանել էր) թագուհի Ալիպիմայինն։ Այդ Իրն Համեդը զոհ գաւորումէր իր մէջ իր նախահարց գեղեցկութիւնը, քաջութիւնը, նուրբ քաղաքավարութիւնը, ազնուամտութիւնը, դոցա հետ միասին այն մեղմ փառահեղութիւնը և այն թեթև յայտնութիւնը տրտմութեան, որ տալիս է մի ազնութեամբ տարած վատաբաղդութիւն։ Նա էր միայն քսան և երկու տարեկան, երբ որբացաւ հօրից. այնուհետև որոշեց նա յանձն առնուլ մի ճանապարհորդութիւն դէպ ի իր նախահարց աշխարհը, որ լցուցանէ իր սրտի փափագը և գլուխ բերէ մի դիտաւորութիւն, որ նա զգուշութեամբ թագուցել էր իր մօրից։

Կ՚ասեն նստումէ նաւ Թունիսի ծովեզրի սանդուղքից. մի չաջողակ հովմ (քամի) տանումէ նորան դէպ ի կարթագէն. նա դուրս է գալիս նաւից և իսկոյն ընտրումէ Գրենադայի ճանապարհը, յայտնելով իր անձը մի արաբական բժիշկ որ եկած էր բժշկական խոտեր ժողովելու Սիերա Նեվադայի սարերի վերայ։ Մի հանդարտ ջորի ծանրաբեռնուլ տանումէր նորան դէպ ի այն աշխարհը, ուր Իրն Սերրաջքը մի ժամանակ արշաւումէին պատերազմական ձիաների վերայ. մի ուղեցոյց երթումէր առաջէից, ձգելով երկու միւս ջորիներ, զանգակներով և գոյն գոյն փունջերով զարդարած։ Իրն Համեդը անց կացաւ Մուրցիայի մեծ մացառքի և արմաւենաստանի միջով. այս արմաւենիքի ծեր հասակից իմաստասիրեց նա, որ գոքա պիտոյ է տնկած լինէին իր նախահարց ձեռքով, և նորա սրտի մէջ ցցուեցան ցաւի նետեր։ Այն տեղ բարձրանումէր մի աշտարակ, ուր հսկումէր պահապանը Մաւրիտանացոց և քրիստոնեաների մէջ եղած պատերազմի միջոցին. այս տեղ երևումէր մի աւերակ, որի ճարտարապետութեան ձևը ծանուցանումէր մաւրիտանեան սկզբնաւորութիւն. մի այլ նիւթ ցաւի Իրն Սերրաջի սրտի համար։ Նա ցած իջաւ ջորուց և պատճառելով իրրև թէ ըղսեր էր որոնում, մի քանի րոպէ թաք կացաւ այս վիլատակների մէջ, որ ազատօրէն ընթացք տայ իր արտասուքին։ Այնուհետև վերստին ճանապարհ ընկաւ, երազների մէջ խո-

բասցյզ եղած, մինչ ջորիների և կարաւանի զանգակները հնչումէին, և իւր ուղեկիցը երգումէր միատեսակ ձայնով։ Սա, այս ուղեկիցը ընդհատումէր միայն իւր երկար տաղերգութիւնը, որ քաջալերէ իւր ջորիքը, տալով նոցա անունս ՝ Սէրուննէր, Թօլբիներ, կամ թէ նախատելու նորանց, ասելով նոցա Ֆայլէր, Խոմոյրներ»։

Ճշմարիտների հօտերը որ մի հովիւ տանումէր որպէս մի զօրախումբ ցամաք ու անջրդի դաշտավայրերի միջով, մի քանի առանձնական ճանապարհորդներ, միանակ կենդանութիւն տալու ճանապարհին, յաւելացնումէին միայն նորա տխուր և անապատ կերպարանքը։ Այս ճանապարհորդքը կրումէին ամենեքեան մի թեթև իւրեանց մէջքին. նոքա փաթաթուած էին մի վերարկուի մէջ, և մի լայնեղերեայ գդակ դէպ ի ցած թեքուելով, կիսով չափ ծածկումէր նոցա երեսը։ Նոքա իւրեանց անց ու դարձի վերայ ողջունումէին Իբն Համեդը, որ այդ աշխիւ ողջունատուութեան մէջ որոշումէր միայն անունս Աթաուէֆ, պարոն և տպէր։ Երեկոյին, իջևանումը, Իբն Սերրաջը տեղաւորվումէր օտարականների մէջ, առանց ձանձրութիւն ստանալու որ և իցէ անհամեստ հարցասիրութեամբ։ Խօսում չէին նորա հետ, հարցաքննում չէին նորան. նորա փակեղը, նորա հանգերձը, նորա զէնքը չէր զարթուցանում ոչինչ զարմացք։ Որովհետև Ալլահը կամեցել էր, որ Մաւրիտանացիք կորցնէին իւրեանց գեղեցիկ հայրենիքը, Իբն Համեդը կարող չէր չպատուել այդ քաջ տիրապետողը։

Նա առել խորին սրտաշարժութիւնք սպասումէին Իբն Սերրաջին նորա ուղևորութեան վերջում։ Գրենադան շինած է Սիերա Նևադայի ոտքում, երկու բարձր բլուրների վերայ, որ մի ձոր բաժանումէ միմեանցից։ Տունները, որ դրած են դէպ ի շեղ կողերի վերայ, ձորի խորութեան մէջ, տալիս են քաղաքին մի կիսատաց նուան կերպարանք ու ձև, և սորանից յառաջացել է նորա անուանակոչութիւնը։ Երկու գետք, Քսենիլ և Դուրօ, որոց մինը զլորուելով բերումէ իւր հետ առուի հետ խառն ոսկու մանրոյքներ, և միսը արծաթի առաջներ, ողողումեն բլուրների ոտքը, միանումեն և ապա օձապտոյտ հոսումեն մի գեղեցիկ դաշտավայրի մէջ, որ ասվումէ Վէգա։ Այս տափարակը որի վերայ նայումէ բարձրից Գրենադան, պատած է ողկոյզներով (խաղողի ծառերով), նռնենիքով, թզենիքով, թթենիքով, նարնջենիքով։ Նա շրջափակած է զարմանալի կերպարանքով ու գունատութեամբ սարերից։ Մի կախարդական գեղեցիկ երկնակամար, մի պարզ ու պատուական օդ ներս են բերում սրտի մէջ մի գաղտնի սիրամաշութիւն, որի երեսից լոկ անցաւոր ճանապարհորդը այս դժուարանումէ պաշտպանել իւր անձը։ Զգալի է, որ այս երկրումն ընդհուշ ախտերը արագութեամբ խեղդած կը լինէին քաջաշնական ախտերը, եթէ սերը, ճշմարիտ լինելու համար, միշտ կարօտ եղած չլինէր փառքի ընթացակցութեանը։

Երբ որ Իւն Համեդը նկատեց Գրենադայի առաջին շինութիւնների կատարը, սիրտը նորա մէջ թնդաց այնպիսի ուստահութեամբ, որ նա ստիպուած էր դադարեցնել իւր ջորին։ Նա խաչաձև դրեց ձեռները կուրծքի վրայ և աչքը բևեռած սրբազան քաղաքի վերայ, ճնաց անխօս և անշարժ։ Ուղեցոյցը նոյնպէս դադարեցաւ, և որովհետև բոլոր վսեմական ղգացողութիւնքը հնշտ հասկանալի են Սպանիացուն, սա երևումէր սիրտը շարժած և գուշակեց թէ Մաւրիտանացին վերստին տեսանումէր իւր հայրենիքը։ Վերջապէս Իւն Սերրաջը ընդհատեց իւր լռութիւնը։

«Ով ուղեցոյց, ձայն արձակեց նա, Աստուած յաջողութիւն տայ. մի ծածկիր ինձանից ճշմարտութիւնը, որովհետև խաղաղութիւնը Թագաւորումէր ծովի ջրերի մէջ քո ծննդեան օրին, և լուսինը մտանումէր իւր լրութեան մէջ։ Ի՛նչ աշտարակներ են սոքա, որ շողշողումեն որպէս աստղներ մի կանաչազարդ անտառի վերայից։

— Ա՛յս է Ալհամբրան» պատասխանումէ ուղեցոյցը։

«Ո՛ւ այս միւս ամրոցը այն միւս բլուրի վերայ ի՛նչ է» ասաց Իւն Համեդը։

«Դա է Ջեներալիֆը, պատասխանեց Սպանիացին։ Այս ամրոցի մէջ կայ մի այգի մրտենի տունկերով, ուր պատմումեն թէ յանկարծակի վերայ էին հասած, երբ որ Իւն Սերրաջը և սուլթանուհի Արփայիսան պրկասատնել էին միմեանց։ Աւելի հեռի տեսանումես դու Ալբայիսինը, և աւելի մօտ այս տեղից, կարմիր աշտարակները»։

Ուղեցոյցի ամեն մի խօսքը թափանցումէր Իւն Համեդի սրտի մէջ։ Ի՛նչպէս ցաւելի բան է կարօտել օտարների օգնութեանը, որ մարդ ուսանի ճանաչել իւր հօրերի յիշատակարանքը և սառնասիրտ մարդերի բերանից լսել իւր ազգատոհմի և իւր բարեկամների պատմութիւնը։ Ուղեցոյցը վերջ դնելով Իւն Համեդի խորհրդածութիւններին, ձայն արձակեց. «Գնանք, պարոն Մաւրիտանացի, գնանք. Աստուած այդպէս է կամեցել։ Քաջալերուի՛ր։ Ո՛չ ապաքէն Ֆրանչիսկոս առաջինը (Ֆրանսիայի Թագաւորը) գտանվումէ այսօր իսկ բանտարկուած մեր Մադրիդի մէջ. Աստուած այդպէս է կամեցել»։ Նա վեր կալաւ գլակը, խաչակնքեց երեսը և դէպ ի յառաջ խթեց ջորիքը։ Իւն Սերրաջը շտապեցնելով նոյնպէս իւր ջորին, ձայն տուեց. «Այդպէս էր գրած» և նոքա ճանապարհորդելով յած իջան դէպ ի Գրենադա։

Նոքա անց կացան այն հաստ հացի ծառի մօտից, որ հռչակաւոր է Մուսայի և կալատրավայի իշխանի մէջ եղած կռուովը, Գրենադայի վերջին Թագաւորի օրերումն։ Նոքա մտան եկան Ալամեդա ղբօսարանի բոլոր տեղերը և ներս մտան քաղաքի մէջ Էլվիրա դարպասից։ Նոքա վեր եկան Բամբլա սարը և շուտով հասան մի տեղի որ ամենայն կողմից շրջապատած էր մաւրիտանական ճարտարապետութեան շինուածներով։ Այս տեղ բաց էր մի կարաւանատուն Աֆրիկայի Մաւրիտանացոց համար, որ վաճառականու-

Թիւնը վերջի մեծաքսով, բաղմութեամբ քարշում բերումէր դէպ ի Գրենադա։ Այս տեղ էր ահա, ուր բերեց ուղեցոյցը Իբն Համեդին։

Իբն Սերրաջի սիրտը չափից դուրս ալեկոծուած էր, քան թէ նա կարող էր մի փոքր հանգիստ վայելել իւր նոր օթեւանի մէջ։ Չկարողանալով ընդդիմանալ այն ախտերին որ պղտորումէին նորա հոգին, նա կէս գիշերին դուրս եկաւ թափառելու Գրենադայի փողոցների մէջ։ Նա փորձ փորձեց իւր աչքով ու ձեռքով վերահասութիւն գործել այն չիշատակարանների մի քանիսին, որ այնքան յաճախ նկարագրել էին ալեւոր մարդիկը։ Դուրս այն բարձր շինութիւնը որի պատերը աղօտապէս տեսանում էին մթութեան մէջ, էր մի ժամանակ Իբն Սերրաջանց բնակութիւնը։ Դուրս այս առանձնական տեղն էր, ուր կատարվումէին այն տօնախմբութիւնքը որ Գրենադայի փառքը բարձրացնումէին մինչեւ ամպերը։ Այն տեղ անցանումէին ձիաւորների խումբ բեր դէպ ի ձիախաղութեան ասպարէզը, փառահեղապէս զգեստաւորուած մեծաքսով ու ոսկով։ այս տեղ յառաջ էին շարժվում թիակաւոր նաւեր, զէնքով ու ծաղիկներով բեռնաւորած, վիշապներ որ դուրս էին արձակում կրակներ, որ և ծածկումէին իւրեանց կողերի մէջ երեւելի պատերազմողք — մեծահանճար պիւտեր վայելչասիրութեան և ասպետական սիրախնդրութեան։

Այց աւաղ։ փոխանակ մաւրիտանական նուագարանների, փոխանակ փողերի և սիրոյ տաղերի ձայնարկութեան, թագաւորումէր մի խորին լռութիւն Իբն Համեդի շորս կողմ։ Այս անբարբառ քաղաքը փոխել էր իւր բնակիչքը, և յաղթողքը հանգստանումէին յաղթուածների օթեւանների մէջ։ «Ուրեմն այդ Գալատ Սալանիացիք — ձայն արձակեց երիտասարդ Մաւրիտանացին զայրացած, քնած են այս յարկերի տակ, ուստի նոքա արտաքսել են իմ նախահայրը։ Եւ ես Իբն Սերրաջանս հսկումեմ անծանօթ, առանձնաւոր, բարձի թողլ արած, իմ հօրերի դրան առաջև»։

Ընդհետև Իբն Համեդը մտածումէր մարդկութեան ճակատագրի վերայ, բաղդի փոփոխականութեան, թագաւորութիւնների կործանման վերայ, վերջապէս այս Գրենադայի վերայ, որի վերայ անակնկալ, ուրախութիւնների մէջ յարձակուել էին Թշնամիքը, և իսկոյն փոխանակել էին նորա ծաղկահիւս պսակները կապանքի հետ։ Նորան երեւումէր, թէ տեսանումէ իւր տօնապզեստ քաղաքացիքը բարձի թողլ առնելով իւրեանց տունն ու տեղը իբրև հիւրեր որ, իւրեանց զարդարանքի խառնակութեան մէջ, յանկարծ արտաքսուած էին մի հանդիսի դահլճից, հրայրեացքի պատճառով։

Այս բոլոր պատկերները, այս բոլոր մտածութիւնքը կուտակվումէին Իբն Համեդի հոգու մէջ։ ցաւով և տրտմութեամբ լցուած, խորհումէր նա մանաւանդ թէ ինչպէս պիտոյ էր նորան լցուցանել իւր դիտաւորութիւնը որ նորան բերել էր դէպ ի Գրենադա։ Օրը յանկարծ լուսացաւ։

Իբն Սերրաջը մոլորուել էր ճանապարհից։ Նա հեռանալով կարաւանատնից, գտանումէր քաղաքի մի բացակայ գաւիթում։ Ամենայն ինչ

քնած էր. ոչ մի աղմուկ չէր շփոթում փողոցների լռութիւնը. տների դուռները և պատուհանները փակած էին. մի միայն որձակի ձայնը քարոզչութիւն չքաւորի բնակարանի մէջ վերապարձը դժուարութիւնների և աշխատութիւնների։

Իբն Համեդը երկար միջոց այս տեղ ու այն տեղ թափառելուց յետոյ, առանց կարողանալու գտնել իւր ճանապարհը, լսեց որ մի դուռն բացվում։ Նա տեսաւ մի երիտասարդ կին դուրս գալով տանից, զգեստաւորուած ասես թէ իբրև այն գութական թագուհիքը որ քանդակած են Ֆրանսիայի հին մենաստանների յիշատակարանների վերայ։ Նորա սև լանջապանակը զարդարած գունաւոր ուլունքով, փակումը նորա վայելուչ վերնամարմինը. նորա կարճ, նեղ և անծալք ստորին հանդերձը երևեցնումէր մի նուրբ սրունգ և մի գեղեցիկ ոտք. մի վերարկու նոյնպէս սև ձգած էր նորա գլխի վերայ. նա ձախ ձեռնով բռնած ունէր այս վերարկուն խաչաձև կապած և փակած որպէս մի լանջաքող նորա կզակի տակ, այնպէս որ նորա երեսից տեսանելի էին միայն նորա խոշոր աչքերը և վարդակարմիր բերանը. մի պալատական կին ուղեկից էր նորան, և մի մանկլաւիկ տանումէր նորա առաջից մի եկեղեցական գիրք. երկու աղնուատոհմ սպասաւորք փոքր ինչ հեռաւորութեամբ երթումէին այդ անծանօթ գեղեցիկ աղջկայ հետևից. նա դիմումէր դէպ ի առաւօտեան աղօթքը ուր հրաւիրումէին զանդակի հնչիւնքը մի դրացի մենաստանից։

Իբն Համեդը կարծեց տեսանել իզլաֆիկ հրեշտակը կամ թէ առաւել մանուկ կոյսը դրախտի հուրիներից։ Սպանիական աղջիկը նոյնքան ևս զարմացած նայումէր Իբն Սերրաջի վերայ, որի փակեղը, հանդերձը և զէնքը ևս առաւել զեղեցկացնումէին նորա աղնիւ կերպարանքը։ Աղջիկը շունչ առած իւր առաջին զարմացրից, մի շնորհալից և աղաւ կերպով, որ սեփական է այս աշխարհի կանանցը, նշանացի արաց օտարականին, որ մօտենայ. «Պարոն Մաւրիտանացի, ասաց նա, դուք, ինչպէս երևումէ, եկաւոր մարդ էք Գրենադայի մէջ. գուցէ թէ մոլորուել էք ճանապարհից։

— Ո՛աղնիների թագուհի, պատասխանեց Իբն Համեդը, մարդկային աչքի հոգեպարար ուրախութիւն, ով քրիստոնեայ աղախին, աւելի չքնաղ քան թէ Վրաստանի օրիորդները, դու գուշակեցիր այդ բանը. ես օտար եմ այս քաղաքիս մէջ, մոլորուած եմ այս ապարանքների մէջ. ես չկարողացայ վերստին գտանել Մաւրիտանացոց իջևանը։ Թո՛ղ Մուհամմադը շարժէ քո սիրտը և վարձատրէ քո հիւրասիրութիւնը»։

Մաւրիտանացիք հռչակաւոր են իւրեանց ընտիր քաղաքավարութեամբ, խօսքը վեր կալաւ սպանիացի աղջիկը մի շատ քաղցր ժպտամբ. բայց ես ոչ ծաղիկների թագուհին իմ, ոչ աղախին և ոչ իսկ կամէի ընդհ գտանել Մուհամմադի տուաջև։ Հետևեցեք ինձ, պարոն ասպետ, ես կ'առաջնորդեմ ձեզ դէպ ի Մաւրիտանացոց իջևանը։

Ահա Թեթեւութեամբ յառաջընթաց եղաւ Իւն Սերրաջէն, տարաւ Նորան մինչեւ կարաւանի իջեւանի դարպասը, մատնացոյց արեց Նորան, անց կացաւ դէպ ի մի պալատի յետնակողմը և չքացաւ։

Ո՜հ, ինչ բանի վերայ է կախած կեանքի հանգստութիւնը։ Հայրենիքը չէ այսուհետեւ, որ միայն և ամենևին զբաղեցնէր Իւն Համեդի հոգին. Գրենադան չէ այլևս Նորա համար մի անապատ, բարձի թողի արած, պրիացած, միայնացած աշխարհ. Նա առաւել սիրելի է Նորա սրտին այժմ, քան թէ երբ և իցէ, բայց այս մի Նոր կախարդական զօրութիւն է, որ գերեզեցկացնումէ Նորա աւերակները. Նախահարց յիշատակների վերայ յաւելանումէ այժմ մի այլ քաղցրութիւն, Իւն Համեդը գտել է այն գերեզմանատունը, ուր հանգստանումեն Իւն Սերրաջեանց նշխարքը. բայց աղօթելով, գետնի վերայ տարածուելով, որդիական արտասուք թափելով, մտածումէ Նա, որ մանուկ սպիանիացի աղջիկը երբեմն անց է կացել այս գերեզմաններու վերայից, և Նա այսուհետև իւր նախահարքը չէ համարում այնքան վատաղդ։

Օ՜ւր և անօգուտ ջանք էր այժմ, զբաղուիլ միայն իւր ուխտապնացութեամբ դէպ ի իւր հօրերի աշխարհը. ըմ՛ր էր այժմ Նորա թափառիլը Դուրօ և քանիլ գետերի եզերքի վերայ, ժողովելու այն տեղ բուսականք արևաբացին. ծաղիկը, որ նա խնդրումէր այժմ, էր գեղեցիկ քրիստոնեայ աղջիկը։ Ի՛նչքան անօգուտ փորձեր փորձել էր նա արդէն, այն սիրտ կախարդող աղջկայ ապարանքը գտանելու համար. քանի՛ և քանի՛ անգամ աշխատել էր նա միւսանգամ անց կենալ այն փողոցներով որոց միջով տարել էր Նորան իւր աստուածեղէն առաջնորդը։ քանի՛ անգամ կարծել էր նա վերստին ճանաչել այն զանգակի ձայնը, այն որձակի երգը որ լսել էր նա սպանիացի աղջկայ օթևանի մօտ։ Ափսոսի շառաչիւններով խաբուած, իսկոյն վազումէ Նա դէպ ի այս կողմը, բայց կախարդական ապարանքը չէ երևումէ Նորա աչքին. շատ անգամ տակաւին, Գրենադայի կանանց միատեսակ զգեստը Նորան տալիս էր մի րոպէ յոյս. հեռուից բոլոր քրիստոնեայ կանայքը նմանումէին Նորա սրտի թագուհուն. բայց մօտից և ոչ մինը չուներ ոչ Նորա գեղեցկութիւնը և ոչ Նորա շնորհաշուք կերպարանքը։ Ափսոսհետև Իւն Համեդը ման էր եկել բոլոր եկեղեցիները, գտանելու օտարական կինը, Նա մինչև անգամ ներս էր մտել Ֆերդինանդոսի և Իզաբելլայի գերեզմանահանգստի մէջ, բայց և այս էր ամենամեծ զոհաբերութիւնը որ Նա իւր կեանքից մէջ յանձն էր առել վասն սիրոյ։

Մի օր որոնումէր Նա բոյսեր Դուրօյի գետաձորի մէջ. հարաւային փետղը իւր ծաղկաղարդ զառ ի վայրի վերայ հաստատած ունէր պարիսպը Ալհամբրայի և պղտիքը Ջենեռալիֆի. հիւսիսային բլուրը զարդարած էր Ալբայիսին սահմանով, ծիծաղադեմ մրգաբեր այգիներով և քարանձաւներով, ուր բնակումէր բազմաթիւ ժողովուրդ։ Ձորի արևմտեան ծայրի վերայ տե-

սանելի էին Գրենադայի զանգակատունքը, որ խմբովին բարձրանումէին քա-
րակաղնիների և մրտենիքի միջից։ Միւս ծայրումը դէպ ի արևելք, ապա-
ռաժ սարերի ծայրերի վերայ աչքը հանդիպումէր մենաստանների, առան-
ձնարանների, հին Իլլիբերիսի քանի մի աւերակներին և հեռաստանում
Սիերա Նեվադայի կատարին։ Դուրս գետը գլորվումէր փոքրիկ ձորի մէջ տե-
ղում և ցուցանումէր իւր ընթացքի երկայնութեամբ զուարթ ջրաղացներ,
աղմկարար ջրվէժներ, խորտակուած կամարներ մի հռոմէական ջրմուղի և
մեացորդքը մի կամրջի Մաւրիտանացոց ժամանակից։

Իբն Համեդը չէր պլևս ոչ այնքան անբաղդ և ոչ այնքան բաղդաւոր,
որ կարողանար լիովին ճաշակել միայնութեան քաղցրութիւնը. նա զբաղ-
ուած մտքով և սաւնութեամբ թափառումէր այս կախարդող ջրեզերքի վե-
րայ։ Շրջելով անխորհուրդ, նա յառաջ գնաց մի ծառազարդ ճեմելիքով
որ պտոյտումէր Ալբայիսինի սարակողմ զառիվայրի վերայ։ Մի գիւղական
տուն, նարնջեղէն անտառից շրջապատուած, շուտով բացուեցաւ նորա աչքի
առաջև. նա մտենչալով անտառին, լսեց մի ձայնի և կիթառի հնչիւնք։ Մի
կնոջ ձայնի, դէմքի, գծագրութիւնների և հայեացքի մէջ կան յարակցու-
թիւնք որ միշտ կարող է ճանաչել իսկոյն մի մարդ, որի սիրտը ըմբռնուած
է սիրու ալոտից։ «Ա՛յս իմ հուրիս է» ասաց Իբն Համեդը, և նա ականջ է
դնում, սիրտը դողալով. Իբն Սերրաջանց անունը շատ անգամ կրկնուելով
աղջկայ տաղերգութեան մէջ, Իբն Համեդի սիրտը զարկումէ ևս առաւել ա-
րագութեամբ։ Ընծանօթը երգումէր մի կաստիլիական տաղ, որ նկարագրու-
մէր Իբն Սերրաջանց և Զեգրիեանց պատմութիւնը։ Իբն Համեդը կարող
չէ պլևս ընդիմանալ իւր սրտի խռովութեանը. նա ձգումէ իւր անձը մի մըր-
տենացանկի վերայից մի խումբ մանուկ կանանց մէջ, որ վախեցած փախչու-
մեն, ձայն արձակելով։ «Սա է պարոն Մաւրիտանացին» և այսպէս տաղեր-
գու աղջիկը յետ է կանչում իւր ընկերակից աղջիկները։ «Ով սիրելիդ հո-
գիների, ասումէ Իբն Սերրաջը, ես որոնումէի քեզ այնպէս, որպէս Արևթացին
որոնումէ մի աղբիւր կէսօրի պրող ջերմութեան մէջ. ես լսեցի քո կիթա-
ռի հնչիւնքը, դու փաւաւորումէիր իմ աշխարհի քաջազունքը, ես գուշա-
կեցի քո լինելը այս տեղ, քո եղանակի գեղեցկութենից, և եկայ նուիրելու
քեզ Իբն Համեդի սիրտը։

—Լա՛ւ ես, պատասխանեց Դօննա Բլանքան, մտածելով քո վերայ յատ-
կապէս, երգումէի Իբն Սերրաջանց գովաստնութիւնը։ Այն րոպէից, երբ
որ ես տեսայ ձեզ, պատկերացնումէի ինձ որ այդ մաւրիտանացի ասպետքը
նմանումէին ձեզ»։

Մի թեթև կարմրութիւն երևեցաւ Բլանքայի ճակատի վերայ, երբ
որ նա արտասանումէր այս խօսքը։ Իբն Համեդը պատրաստ էր ծունր խո-
նարհնեցնել մանուկ քրիստոնեայ աղջկայ առաջև, յայտնել նորան, թէ նա
էր վերջին շառաւիղը Իբն Սերրաջանց, բայց մի խոհեմութիւն, որ դեռ ևս

ՄՈՒՄԸ Նորա մէջ, յետ պահեց Նորան այդ խոստովանութենից. Նա կասկածեց, մի գուցէ Նորա տոհմի անունը, այնքան հռչակաւոր Գրենադայի մէջ, անհանգստութիւնը պատրաստէր քաղաքապետին։ Պատերազմը ընդդէմ Մաւրիտանացոց հաղիւ թէ վերջացել էր, և մի իշն Սերրաջեանի ներկայութիւն այս րոպէիս, կարող էր աղդել Սպանիացոց մէջ տրդարացի երկմտութիւնք։ Ոչ թէ իշն Համդը ահ ու դողի մէջ էր մի վտանգի երեսից, այլ Նա տարաձումէր մտածելով, թէ ստիպուած կը լինէր յաւիտեան հեռանալ Դօն Րոդրիգի աղջկանից։

Դօննա Բլանքան շաւաւիղումէր մի ազգատոհմից որ իւր արմատը բղխեցնումէր Բիվարի Սիդից և Շիմենէ անուն դուստրից Գորմասի կոմս Գոմեցի։ Յաղթող Վալենս-լա-Բելլայի սերունդը, կաստիլիական պալատի անշնորհակալութեամբ, ընկաւ մի խորին աղքատութեան մէջ. այո՛ ամբողջ դարեր կարծել էին, թէ այդ ազգատոհմը չիջել է. այնքան նսեմացած էր այդ ազգատոհմը։ Բայց դեպ ի Գրենադայի տիրապետութեան ժամանակը, մի վերջին շաւաւիղ Բիվարեան ազգատոհմի, նախապատիւ Բլանքայի, նշանաւոր կացուց իւր անձը ոչ այնքան իւր արտօնութեամբ, որքան մանաւանդ իւր քաջութեան պանծանքով։ Անհաւատների արտաքսմանութենից յետոյ, Ֆերդինանդոսը ընծայեց Սիդի զաւակներին շատ Մաւրիտանացոց կալուածներ և շինեց Նորան կոմս Սանտա Ֆէի։ Նորընտիր կոմսը հաստատեց իւր բնակութիւնը Գրենադայի մէջ և մեռաւ մանուկ տակաւին, թողնելով մի հատ որդի, ամենանացած արդէն, Դօն Րոդրիգ անուն, Հայրը Բլանքայի։

Դօննա Թերեզիա դը Քաերէս, կինը դօն Րոդրիգի ծնաւ մի որդի, որ մկրտութեան աւազանի մէջ ստացաւ անունս Րոդրիգ որպէս Նորա բոլոր նախահարքը, բայց յետոյ տուեցին Նորան անունս դօն Կարլոս, Նորան իւր հօրից զանազանելու համար։ Այն մեծամեծ անցքերը որ Րոդրիգը ունէր իւր աչքի առաջև, սկսեալ իւր ամենաքնքուշ մանկութենից, այն վտանգները որոց ենթարկուած էր Նա, հաղիւ թէ երեխայութեան տարիներից դուրս եկած, Ներգործեցին միայն, աւելի ծանրութիւն և խստութիւն տալով մի բնաւորութեան որ սկզբից արդէն հակամիտուած էր դէպ ի խստաբարոյութիւն, Դօն Կարլոսը հաղիւ թէ հասել էր տասն և չորսամեայ հասակի, և ահա ուղեկից եղաւ Կոլտեցին դէպ ի Մեքսիկօ. Նա համբերել էր այս աշխարհաշրջութեան բոլոր վտանգներին, Նա ականատես էր եղած դորա բոլոր աշարկու անցքերին, Նա մնտակաց էր գտանուել կործանմանը վերջին Թագաւորի մի աշխարհի որ մինչև այն ժամանակ անյայտ էր։ Այս աղետալի անցքից երեք տարի յետոյ, Դօն Կարլոսը գտանուել էր Եւրոպայումի, պահպանի կուսակ, որպէս թէ կամենալով տեսանել պատկած պարծանքի և քաջութեան յաղթութիւը լաղդի հարուածներն տակ։ Մի նոր տիեզերքի տեսութիւն, երկարատև ճանապարհորդութիւնք այնպիսի ծովերի վերայ ուր դեռ և նաւաշրջիկ եղած չէին մարդիկ, քաղաքական յեղափոխութիւնների տե-

տարանը և բաղդի փոփոխութիւնքը սաստիկ դղրդել էին Դօն կարլոսի կրօնասէր և տխրամիտ երևակայութիւնը. նա մտել էր կալատրավայի ասպետական կարգի մէջ և հրաժարուելով ամուսնութենից, թէպէտ նորա հայր Դօն Բոդրիգը շատ ու շատ ցանկացած էր իւր որդու ամուսնութեանը, կտակեց իւր բոլոր գոյքը իւր քուերը։

Ելանքա դը Ռիվար, մի հատ քոյրը Դօն կարլոսի, և շատ աւելի մանուկ բան թէ նա, էր իւր հօր երկրպագութեան կուռքը. նա զրկուած էր իւր մօրից և արդէն մտանում էր իւր հասակի տասնեւութ տարու մէջ, երբ որ Իշն Համեդը երեւեցաւ Գրենադայի մէջ։ Ամենայն բան հրապուրիչ էր այս կախարդող կնոջ մէջ. նորա ձայնը զմայլեցուցիչ էր, նորա կաքաւաղութիւնը աւելի թեթև բան թէ ղեփիւռը. երբեմն զուարճանումէր նա որպէս մի Արմիդա ուղղելով մի լծած կառք, երբեմն թռչումէր նա Անդալուզիայի ամենարագ վազող ձիու քամակի վերայ, ինչպէս այն չքնաղ կախարդուհիքը որ երևումէին Թիստանին և Գալաօրին անտառների մէջ։ Աթէնքը կը համարէր նորան երկրորդ Ասպազիա, և փարիզը մի Դիանա փոաթեան, որ սկսել էր փայլել պալատի մէջ։ Բայց մի ֆրանսիական կնոջ քաղցրութեան հետ կցորդումէր նա ախտերը մի սպանիացի կնոջ, և նորա բնական տարփածութիւնը ոչինչ խլում չէր նորա սրտի զգայողութիւնների ստուգութենից, կայունութենից, ազդողութենից և վսեմութենից։

Ա՛յն ձայնի վերայ, որ արձակել էին մանուկ սպանիական աղջիկները, երբ որ Իշն Համեդը յանկարծ երևել էր ցանկապատ անտառի մէջ, մոտ վազեց դօն Բոդրիգը։ «Իմ հայր, ասաց Ելանքան, ահա պարոն Մաւրիտանացին որի մասին ես պատմել եմ քեզ։ Նա լսել է իմ տաղերգութիւնը, նա վերստին ճանաչել է ինձ, նա մտել է պդուռ մէջ, շնորհակալութիւն մատուցանելու ինձ նորա համար, որ ես ցուցել էի նորան ճանապարհը։

Սանտա-Ֆեի դռբաքը ընդունեց Իշն Սերրաջին Սպանիացոց ծանր բայց և պարզամիտ քաղաքավարութեամբ։ Ա՛յս ազգի մէջ նկատելի չէ ոչ մի ծառայական կերպարանք, ոչ մի դարձուած խօսքի, որ ցուցանէր մտածողութեան ստորաքարշութիւն և հոգու նուաստագործութիւն։ Մեծատունի և շինականի լեզուն է մի և նոյն, ողջոյնը մի և նոյն, քաղաքավարութեան ձևերը մի և նոյն, սովորութիւնքը, աւանդութիւնքը մի և նոյն։ Որչափ այս ազգի հաւատը և աղնուամտութիւնը դէպ ի օտարականքը անսահման են, նոյնչափ ահարկու է նորա վրէժխնդրութիւնը, երբ որ մի մարդ դաւաճան էր գտանուել դէպ ի նա։ Սպանիացին ունելով մի հերոսական վստահութիւն, մի ամենատար համբերութիւն, անկարող խոնարհել մի ձախորդ բաղդի, պէտք է կամ յաղթահարէ նորան, կամ թէ ջարդուփշուր լինի նորանից։ Նա սակաւ ինչ ունի այն բանից որին ասում մենք հանճար, բայց նորա հոգեղմայլ ախտերը բռնում տեղը այն լուսի որ յառաջանումէ սրամտութենից և իդէաների ճոխութենից։ Մի Սպանիացի, որ անցուցանումէ օրը

առանց խօսելու, որ ոչինչ տեսած չէ, որ որոնում չէ մի բան տեսանել, որ ոչինչ կարդացել չէ, ոչինչ ուսումնասիրել չէ, ոչինչ համեմատել չէ, կարող է իւր խորհուրդների մեծութեան մէջ գտանել հարկաւոր նպաստը (օգնական հնարները) ձախորդութեան րոպէում։

Այս էր Դօն Բոդրիգի ծննդեան օրի ոտնը, և Բլանքան պատրաստուեմէր իւր հօրը մի փոքրիկ ինջուք այս գեղեցիկ առանձնութեան մէջ։ Սանտա-Ֆէի դուքսը հրաւիրեց Իբն Համեդին նստել մանուկ կանանց մէջ, որ զուարճանումէին օտարականի փակելի (թուրբանի) և զգեստի վերայ։ Խնդին բերեցին մանուկ բարձեր և Իբն Սերրաջը հանգստացաւ սոցա վերայ Մաւրիտանացոց պէս։ Նորանից հարցմունք արեցին իւր աշխարհի և իւր գլխի անցքի մասին. նա պատասխանեց դոցա խելացի և զուարճ կերպով։ Նա խօսումէր շատ մաքուր կաստիլիական լեզուով. կարելի էր համարել նորան լուն սպանիացի, եթէ զրնեէ միշտ գործ դրած չլինէր խօսքս դա-վոխանակ դ-ո։ Այս բանս ունէր մի այնպիսի քաղցրութիւն նորա բերանում, որ Բլանքան կարող չէր զսպել իւր մէջ մի ծածուկ տհաճութիւն, երբ որ նա երեսը դարձուցանումէր խօսելու նորա ընկերակից աղջիկներից մինի հետ։

Երեկոյեան բաղմաթիւ սպասաւորք, բերելով շօկօլատ, միզեղէն խմորք և փոքրիկ շաքարեղէն հացեր Մալագայից, սպիտակ իբրև ձիւն, փուխր և թեթև ինչպես սպունգ։ Զվէնի այս վայելքին, խնդրեցին Բլանքայից, որ լցուցանէ մինը այն, բնաւորութիւն պատկերացնող պարախաղութիւններից, որոց մէջ նա գերազանցումէր առաւել յաջողակ գիտանոսը (ցիպանները Սպանիայի)։ Բլանքան ստիպուեցաւ տեղը տալ բարեկամների խնդրանքին։ Իբն Համեդը լուռ էր, բայց նորա թախանձող հայեացքը խօսումէին, թէև անշարժ էր բերանը։ Սպանիացի աղջիկը ընտրեց մի զոյգ, մի յայտնողական կաքաւողութիւն որ Սպանիացիք փոխ էին առել Մաւրիտանացիներից։

Մինը մանուկ կանանցից սկսանումէ ածել կիթառի վերայ օտար պարախաղութեան եղանակը։ Դօն Բոդրիգի աղջիկը հանումէ վերայից քօղը և կապումէ սպիտակ ձեռներին բամբիռներ [1]) արաւոսեան փայտից։ Նորա սեւ մազերը օղերի պէս թափվումէն նորա ալաբաստրեան պարանոցի վերայ. նորա ըղձանքը և նորա աչքերը ժպտումէն միաբանութեամբ. նորա երեսի գոյնը զուարթացած է նորա սրտի շարժողութեամբ։ Ցանկարծ հնչեցնումէ նա աղմկարար արաւոսը. երեք անգամ զարկումէ երաժշտութեան չափը, սկսանումէ նուագել ջմբռա խաղի երգը և խառնելով իւր ձայնը կիթառի հնչողութեան հետ, սլանումէ կայծակի պէս։

Այնչ բաղմերիւակութիւն նորա քայլափոխի մէջ, ինչ վայելչութիւն նորա մարմնի կացութիւնների մէջ։ Երբեմն բարձրացնումէ նա իւր աղուհները կենդանութեամբ, երբեմն ցած է թողում նորանց թուլութեամբ. երբեմն

[1]) Զալփարանը, այսինքն զարկուղական փարաները։

յարձակվումէ նա իրրև արբեցած ուրախութենից և ապա յետ է քարշվում որպէս ճնշած ցաւից։ Նա շրջումէ պլուխը, երևումէ թէ կանչումէր մի անտեսանելի ոք, պարզումէ համեստութեամբ կարմիր թուշը դէպ ի մի նորափեսայի համբոյր, փախչումէ ամաչկոտութեամբ, յետ է դառնում պայծառացած և մխիթարուած, ճեմումէ մի աղնիւ և գրեթէ պատերազմական քայլով, յետոյ դարձեալ թոթռումէ կանաչ գաշտի վերայ։ Դաշնակութիւնը նորա քայլերի, նորա տաղերի և կիթառի հնչիւնների մէջ, էր կատարեալ։ Բլանքայի ձայնը փոքր ինչ ճնշուած, ունէր մի տեսակ շեշտ, որ շարժումէ ախտերը մինչև սրտի խորքը։ Սպանիական երաժշտութիւնը, բաղկանալով հառաչանքից, աշխոյժ շարժուածքից, տխուր կրկնութիւններից մի և նոյն վերջաբաւերի, յանկարծ դադարեցրած երգերից, ցուցանումէ մի անզուգական խառնուրդ զուարճութեան և տխրամտութեան։ Այս նուագածութիւնը և այս պարախաղը անխուսափելի որոշեցին ու կնքեցին վերջին Իբն Սերրաջի ճակատագիրը. նոքա բաւական էին պղտորելու մի աւելի փոքր խոցուած սիրտ, քան թէ նորա սիրտն էր։

Երեկոյին վերադարձան դէպ ի Գրենադա, Դուրջայի գետաձորով։ Դօն Բոդրիգը, Իբն Համեդի աղնիւ և քաղաքավար շարժուածքից զմայլուած, չկամէր բաժանուիլ նորանից, առանց հիւրի խոստմանը թէ նա յաճախ դալու էր զուարճացնելու Բլանքան զարմանալի պատմութեամբք արևելեան աշխարհի մասին։ Մաւրիտանացին, հասած իւր բաղձանքի պսակին, ընդունեց Սանտա-Ֆեյի դուքսի հրաւէրը, և միւս օրին գնաց դէպ ի պալատը, ուր ապրումէր այն նաղելի աղջիկը որ սիրելի էր նորան աւելի քան թէ ցերեկի լոյսը։

Իւանքան շուտով նկատեց իւր անձը ըմբռնուած մի խորին ախտի մէջ նոյն իսկ անհնարութեամբ որ իւր կարծիքով պիտի նորան միշտ արգելք լինէր զգալու մի այդպիսի ախտ։ Սիրել մի անհաւատ մարդ, մի Մաւրիտանացի, մի անծանօթ անձն, երևումէր նորան այնքան խորթ, որ նա անփոյթ արեց պահել իւր անձը այն ցաւից որ սկսանումէր ներս սողալ նորա երակների մէջ. բայց երբ որ նա նկատել էր Հարուածը, նա ընդունեց դորա ցաւը որպէս ճշմարիտ Սպանիացի։ Վտանգները և աղէտքը որ դուշակումէր նա, չսոփպեցին նորան յետ քարշուիլ դէպ ի անդունդքի ափը և ոչ իսկ երկար ու ձիգ խորհրդածութիւն առնել իւր սրտի հետ։ Նա ասաց ինքն իւրեան. «Թող Իբն Համեդը լինի քրիստոնեայ, թող սիրէ ինձ, այնուհետև կը լինիմ ես բաղդաւոր։

Իբն Սերրաջը զգաց նոյնպէս մի անընդդիմանալի ախտի բռնադակ կարողութիւնը. նա ապրումէր այնուհետև Բլանքայի համար միայն. նա չէր պալ ևս զբաղուած այն խորհուրդներով որ նորան բերել էին դէպ ի Գրենադա. նորան հեշտ էր ստանալ այն ծանօթութիւնքը որ եկել էր որոնելու, բայց, բայց ամենայն միւս հարցասիրութիւն, քան թէ իւր սէրը, չքացել

էր նորա աչքում. նա մինչև անգամ երկիւղ ունէր այնպիսի տեղեկութիւններից, որ կարող էին յառաջացնել փոփոխութիւնք կեանքի մէջ. նա ոչինչ խնդրում չէր, ոչինչ չկամէր պիտել. նա ասում էր իւրեան. «Թո՛ղ Բլանքան լինի մուսուլման, թո՛ղ նա սիրէ ինձ, և ես կը ծառայեմ նորան մինչև իմ վերջին շունչը»։

Իբն Համեդը և Բլանքան, այսպէս հաստատուած իւրեանց խորհրդի մէջ, սպասում էին միայն րոպէին, երբ կարող էին յայտնել միմեանց իւրեանց սէրը։ Նոքա գտանվում էին արդէն տարու ամենաքաղցր օրերի մէջ։ «Դուք դեռ ևս տեսած չէք Ալհամբրան, Սանտա-Ֆէի աղջիկը ասաց Իբն Սերրաջին։ Եթէ կարող էի հաւատ ընծայել մի քանի խօսքերի որ ձեր բերանից դուրս են թռած, ձեր աղգատոհմը Գրենադայի ընիկ է։ Գուցէ լինելու էր ձեզ շատ հաճելի այցելութիւն առնել ձեր հին թագաւորների ապարանքին։ Ես ինքս կամիմ այս երեկոյ լինել ձեր առաջնորդ»։

Իբն Համեդը երդուեցաւ մարգարէի անունով, թէ երբէք մի ըզօսանք կարող չէր լինել աւելի քաղցր, քան թէ այդ։

Երբ հասել էր որոշած ժամը ճանապարհորդութեան դէպ ի Ալհամբրա, դէն Րոդրիգի աղջիկը հինգաւ մի սպիտակ քաջընթաց երիվարի (ձիու) վերայ, որ սովոր էր պծի պէս վեր մագլել դէպ ի ապառաժները։ Իբն Համեդը ուղեկից էր վառաւոր սպանիացի աղջկայ հետ, մի անդալուզեան երիվարի վերայ, որ Տաճիկների սովորութեան պէս պատրաստած էր։ Երիտասարդ Մաւրիտանացու սրընթաց վազքի մէջ, նորա ծիրանագոյն հանդերձը փողփողում էր նորա քամակից, նորա կորաձև (կեռ) Թուրը թնդում էր բարձրացած Թամբի վերայ, և Հողմը տարուբերում նորա փակեղի վերայ ամբացուցած փետրազարդը։ Ծողովուրդը, զմայլուած այս ձիաւորի ալնիւ քաղաքավարութենից, ասում էր նայելով նորա ճանապարհի վերայ. «Սա մի անհատ իշխան է, որին Բլանքան կամի քրիստոնեայ շինել»։

Նորա ընտրեցին նախ մի երկար փողոց որ կրում էր տակաւին մի հրուչակաւոր մաւրիտանական աղգատոհմի անուն. այս փողոցը վերջանում էր Ալհամբրայի արտաքին պարսպով։ Յետոյ անց կացան նորա մի անտառ կընձիի ծառերի, հասան մի աւազանի և շուտով կանգնած էին Թօաբդիլի պալատի ներքին պարսպի առաջև։ Մի, դղեակներով ամրացուցած և ստուարաւոր յօրինած պատի մէջ բացվում էր մի դարպաս «Դատաստանի դուռն» անունով։ Նորա անց կացան այս առաջին դռնից և յառաջ գնացին մի նեղ ճանապարհով որ օձապտոյտ ձգվում էր բարձր պատերի և կիսաւեր շէնքերի միջով։ Այս ճանապարհը տարաւ նորանց դէպ ի հրապարակը Ալջիբեանց, որի մօտակայքում կարողս հինգերորդը կառուցանում էր այն միջոցին մի ապարանք։ Այն տեղից դառնալով դէպ ի հիւսիս, դադարեցան նորա մի անապատ գաւթի մէջ, մի անզարդ և ժամանակի ձեռքով անշքացուցած պատի ոտքում։ Իբն Համեդը, թեթևութեամբ ցած թռչելով ձի-

ուց, մատուց ձեռը Բլանքային, որ սա իջանէր ջորու վերայից։ Սպասաւորքը թակեցին մի բարձի թողն արած դուռն, որի շեմքը ծածկել էր խոտը. դուռը բացուեցաւ և յանկարծ տեսանելի կացուց Ալհամբրայի գաղտնի խորշերն ու անկիւնքը։

Իմոլոր քաղցրութիւնքը, բոլոր ցաւերը հայրենիքի, խառնուելով սիրոյ կախարդագործութեան հետ, ըմբռնեցին վերջին Իքն Սերրաջանի սիրտը։ Անշարժ և անբարբառ խորասոյզ արեց նա իւր զարմացած հայեացքը ի մէջ այս բնակարանիս ոգիների. նա կարծումէր թէ տեղափոխուած է դէպ ի միևը այն ապարանքների որոց նկարագրութիւնը կարդումենք արաբական վիպասանութիւնների մէջ, Զուարճ ճեմելիք սպիտակ մարմարիոնից շինած, ջրմուղներ որոց եզերքը պատած էին լիմոնի և նարընջի ծառերով ծաղկի մէջ, աղբիւրներ, միայնացած գաւիթներ ամենայն կողմից երևումէին Իքն Համեդի աչքի առաջև, և սիւնազարդ սրահների երկայնաձիգ կամարների միջով նկատումէր նա ուրիշ լաբիրինթոսներ և նորանոր կախարդութիւնք։ Կապոյտ գունաւորութիւն ամենազեղեցիկ երկնակամարի երևումէր սիւների մէջ որ իրեանց վերայ պահումէին մի շղթայ գութական կամարակապների։ Պատերը լեռնաւորուած քանդակագործ ծաղիկներով, յայտնապէս նմանութեամբ արևելեան աշխարհի կերպասներին, որ ասղնագործումէ Հարեմի տաղտկութեան մէջ մի ստրուկ կնոջ օտարագիւտ միտք։ Մի հեշտախտական, կրօնաւոր և պատերազմական բան ասես թէ շնչումէր այս կախարդական շինուածի մէջ. մի տեսակ մենաստան սիրոյ, ծածկախորհուրդ առանձնարան, ուր մուրիտանական թագաւորքը ճաշակումէին բոլոր վայելչութիւնքը և մոռանումէին կեանքի բոլոր պարտականութիւնքը։

Մի քանի րոպէ անակնկալ հիացքից և լռութենից յետոյ, երկու սիրողքը ներս մտան ի մէջ այս օթևանի մի անհետացած թագաւորութեան և անցած գնացած բաղդաւորութիւնների։ Նոքա նախ և յառաջ շրջեցան Մեզուբարների պահճի մէջ, վայելելով ծաղիկների անուշահոտութիւնը և ջրերի ղողութիւնը։ Ապա ներս մտան Աղիւծների սրահի մէջ։ Իքն Համեդի խռովութիւնը պղտոնումէր ամեն մի քայլափոխի մէջ։ «Եթէ դու չլցուցանէիր իմ հոգին երանութեամբը, ասումէր նա Բլանքային, ինչ ցաւով պիտի հարցանէի քեզանից, ով սպանիական աղջիկ, այս օթևանների պատմութիւնը։ Ո՜հ, այս տեղերս շինած են լինելու առանձնարանք երջանկութեան, բայց ես...»

Իքն Համեդը նկատեց Բօաբդիլի անունը, մեղայիկների մէջ հագցրած. «Ով իմ թագաւոր, ձայն արձակեց նա, ուր ես դու այսօր. ո՛ր տեղ կարող իմ գտանել քեզ քո անապատ Ալհամբրայի մէջ»։ Եւ հաւատարմութեան, հպատակութեան և մեծարանքի արտասուքը հեղեղեցին մուրիտանացի երիտասարդի աչքերը։ «Ձեր հին պապերը, ասաց Բլանքան, կամ մանուանդ

ձեր պապերի Թագաւորները ապերախտ էին։—Ի՛նչ վնաս դորանից, պատասխանեց Իշն Սերրաջեանը, նոքա եղել են անբաղդ»։

Երբ որ նա արտասանում էր այս խօսքը, Բլանքան տարաւ նորան դէպ ի մի սենեակ որ երևումէր նոյն իսկ սրբարանը սիրոյ տաճարի։ Աննման ու անզգայ էր այս պատպարանի փառահեղութիւնը. լոլոր կամարակապը, կապոյտ գունով և ոսկով նկարած և ծակոտկէն ծաղիկներով յօրինած, Թողումէր լուսին Թափանցել որպէս մի ծաղկահիւսի միջով։ Մի աւազան դուրս էր ցայտում ջուրը շինուածի մէջ տեղում, և նորա կաթիլները ցած Թափուելով որպէս ցօղի շիթեր հաւաքվումէին մի ալապաստրեան կոնքի մէջ։ «Ով Իշն Համեդ, ասումէր Սանտա-Ֆեէի դուքսի աղջիկը, լաւ նայեցէք այս աւազանին. նա ընդունել է իւր մէջ Իշն Սերրաջների պլանդակուած գլուխները։ Դուք տակաւին կարող էք տեսանել մարմարիոնի վերայ հետքը արիւնի այն վատաբաղդների որ Բոաբդիլը մորթեց կասկածանքի մէջ լինելով։ Այսպէս ահա վարվումեն ձեր աշխարհում այն մարդերի հետ, որ մոլորեցնումեն թեթևահաւատ կանայք»։

Իշն Համեդը պլ ևս ականջ չէր դնում Բլանքային. նա տարածուել էր գետնի վերայ և պատկառանքով համբուրումէր իւր նախահարց արիւնի հետքը։ Բարձրանում տեղից և ձայն է արձակում. «Ով Բլանքա, ես երդվումեմ այս ասպետների արիւնով, սիրել քեզ մի Իշն Սերրաջեանի հաստատութեամբ, հաւատարմութեամբ և ջերմութեամբ։

«Ուրեմն դուք սիրո՞ւմէք ինձ, պատասխանեց Բլանքան կցելով իւր երկու սպիտակ ձեռքը և վերուղղելով իւր հայեացքը դէպ ի երկինք։ Բայց մտածեցէք, որ դուք անհաւատ մարդ էք, Մաւրիտանացի, Թշնամի, իսկ ես քրիստոնեայ և սպանիացի եմ»։

—Ով սուրբ մարդարէ, ասաց Իշն Համեդը, դու վկայ եղիր իմ սիրոյն...» Բլանքան կտրեց նորա խօսքը. «Ի՛նչ հաւատ կարող եմ ես ընծայել իմ Աստուծոյ հալածողի երդմունքին, Գիտէք դուք, որ ես սիրումեմ ձեզ. ով է ձեզ համարձակութիւն տուել խօսել իմ հետ պղպիսի լեզուով։

Իշն Համեդը շուարուած, պատասխանեց. «Այո՛, ես միայն քո ծառան եմ. դու չես ինձ ընտրել լինելու քո տարփածու ասպետը»։

—Ով Մաւրիտանացի, ասաց Բլանքան, Թո՛ղ այն տեղ քո խորամանկութիւնը. դու տեսել ես իմ հայեացքի մէջ, որ ես սիրումեմ քեզ. իմ խելագար սէրս դէպ ի քեզ ամենայն չափից դուրս է. դարձիր քրիստոնեայ, այնուհետև ոչինչ բան կարող չէր ինձ արգելել քո սուիսկանը լինելուց։ Բայց եթէ Սանտա-Ֆեէի դուքսի աղջիկը վստահանում էր այսպէս համարձակ խօսել քո հետ, դու կարող ես եզրափակել սորանից արդէն, Թէ նա կարող կը լինի յաղթել իւրեան, և Թէ քրիստոնեաների Թշնամին երբէք ոչ նեներում չէ իշխանութիւն նորա վերայ»։

Իբն Համեդը յափշտակուած իւր ախտից, ըմբռնեց Բլանքայի ձեռքը, դրեց նորանց իւր փակեղի վերայ և ապա իւր սրտի վերայ. «Ալլահը ամենակարող է, ձայն արձակեց նա և Իբն Համեդը բաղդաւոր է. ով Մուհամմէդ, թո՛ղ այս քրիստոնեայ աղջիկը խոստովանէ քո օրէնքը, և այնուհետև ոչինչ կարող չէ...— «Դու հայհոյումես, ասաց Բլանքան. դուրս գնանք այս տեղից»։

Պատնիացի աղջիկը թիկն տուած Մաւրիտանացու բազուկի վերայ, մօտեցաւ Տասներկու առիւծների աւազանին, որ տալիս է իւր անունը Ալհամբրայի գաւիթներից մինին. «Ով օտարական, ասաց պարզամիտ սպանիացի աղջիկը, երբ որ ես նայումեմ քո հանդերձին, քո փակեղին, քո զէնքին և մտածումեմ մեր սիրակցութեան վերայ, այնուհետև կարծումեմ տեսանել գեղեցիկ Իբն Սերրաջեանի ստուերը զբօսանք առնելով այս բարձի թաղի արած պատսպարանի մէջ անբաղդ Ալֆայիմայի հետ։ Մեկնի՛ր ինձ առաբական մակագիրը որ կայ այս աւազանի մարմարիոնի վերայ»։

Իբն Համեդը կարդումէ հետևեալ խօսքս.

Գնեղեցիկ էլհամռահին ու զբօսանոցն որ զբօսանոցի այգու մէջ, գեհարներով զարդարած, անպարծելի է բազմապարհանոցի նորա գեղեցկութիւնը... մակագրի մնացորդը ջնջուած էր։

«Այս մակագիրը վերաբերվումէ իսկապէս քեզ, ասաց Իբն Համեդը. ով սիրելի Թագուհի, այս պալատները երբէք եղած չեն այնպէս գեղեցիկ իւրեանց մանկութեան ժամանակին, ինչպէս նոքա այսօր են իւրեանց աւերակների մէջ։ Ականջ դիր աղմկին այս աւազանների որոց մամուռը զարձուցել է ջրերը իւրեանց ընթացքից. զննիր այդ այգիքը որ երևումեն այս կիսաւեր կամարակապների միջով. քննիր ցերեկի լուսաւորը որ մայր է մտանում այս սիւնաշարդ սրահների այն կողմում. ինչպէս քաղցր է քո հեթ միասին շրջել այս տեղերում։ Քո խօսքերը խնկաւորումեն այս պատսպարանքը որպէս վարդերը Հիմենէի։ Որպիսի զմայլանքով ճանաչումեմ քո խօսակցութեան մէջ մի քանի շեշտերը իմ հայրենական լեզուի. մի լոկ շառաչիւնը քո զգեստի այս մարմարիոնների վերայ դող է ձգում սիրտս. օդը բուրումէ միայն անուշահոտութիւն, որովհետև շօշափել էր քո մազերը։ Դու չքնաղ ես որպէս ոգին իմ հայրենիքի այս աւերակների մէջ։ Բայց կարծո՞ղ է Իբն Համեդը յուսալ գրաւել քո սիրտը. ինչ է նա քո առաջև։ Նա իւր հօր հետ չափել է սարերը, նա դիտէ անապատի բոյսերը..., աւա՛ղ, ոչ մինը այդ բոյսերից կարող չէ բժշկական դեղ լինել այն խոցին, որ դու պատրաստել ես նորան. նա կրումէ զէնք, բայց նա չէ ասպետ։ Ես մի օր ասումէի ինքս ինձ. ծովի ջուրը որ քնած է ապահով, ապառաժի խորքի մէջ, հանդարտ ու մունջ է, մինչ ամենայն բան մեծ ծովի մօտակայքում խռովայոյզ և աղմկալից է։ Ով Իբն Համեդ, այնպէս կը լինի քո կեանքը. լուռ, խաղաղ, անյայտ մի անծանօթի աշխարհի անկիւնում, մինչ սուլթանի պալատը հիմն ի վեր է կործանվում փոթորիկներից։ Ես այս բանս ասումէի

ինձ, ով մանուկ քրիստոնեայ աղջիկ, և դու ապացոյց տուեցիր ինձ թէ փո-
թորիկը կարող է նոյնպէս պղտորել մի կաթիլ ջուր ապառաժի խորքի մէջ։

Բլանքան, յափշտակուած հիացքից, լսումէր այս խօսակցութիւնը,
որ ամենևին նոր էր նորա համար և իւր արևելեան դարձուածներով ասես թէ
շատ յարմարաւոր էր կախարդուհիների ընակարանին որի մէջ շրջումէր նա
իւր սիրոյն հետ։ Սէրը ամենայն կողմից թափանցումէր նորա սրտի մէջ. նա
զգումէր իւր ծնկերի թուլանալը, նա ստիպուած էր աւելի պնդութեամբ
թիկն տալ իւր առաջնորդի բազուկի վերայ։ Իբն Համեդը կրումէր իւր վե-
րայ այդ քաղցր բեռը և կրկնումէր, յառաջ քայլելով. Ո՜հ, ինչո՞ւ համար
չեմ ես մի փառահեղ Իբն Սերրաջեան»։

—Այնուհետև դու լինելու էիր ինձ ոչ այնքան հաւանելի, ասաց
Բլանքան. պատճառ, ես պիտի աւելի տանջուէի. մնա՛ դու անյայտութեան
մէջ և ապրիր իմ համար։ Շատ անգամ մի հուշակաւոր աստիճ մոռանում
սէրը, իւր անունի համար։

—Երեք տեղիք չկայ վախելու այդ վտանգից, զուարթութեամբ պա-
տասխանեց Իբն Համեդը։

—Ասրեմն, ինչպէս սիրելու ես դու ինձ, եթէ լինէիր դու Իբն Սեր-
րաջեան» ասաց Շիմենի Թոռնը։

—Ոչ սիրելու էի քեզ, պատասխանեց Մաւրիտանացին, աւելի քան
թէ փառքը, բայց սակաւ քան թէ պատիւը։

Երևը ցած էր իջել Հորիզոնի տակ, երկու սիրողների զբօսանքի միջո-
ցին։ Նոքա ման էին եկել բոլոր Ալհամբրահի մէջ։ Ի՛նչ յիշատակներ հան-
դիպումէին Իբն Համեդի մտածութեանը։ Այս տեղ սուլթանուհին շնչա-
մուտներով ստանումէր ծովիսը անուշահոտ նիւթերի որ պրումէին նորա
օթեւանի տակում. այն տեղ, մի հեռաւոր պատպարանում զարդարումէր
նա արևելեան աշխարհի բոլոր պաճուճանքով։ Եւ Բլանքան էր, մի երկրը-
պաղելի կին, որ այս մանրամասնութիւնքը պատմումէր գեղեցիկ երիտա-
սարդին, որ նորան պաշտումէր իբրև կուռք։

Լուսինը բարձրանալով տարածումէր իւր երկդիմի պայծառութիւնը
բարձի թողն արած սրբարանների մէջ և Ալհամբրայի անապատ գաւիթնե-
րի մէջ։ Նորա սպիտակ ճառագայթները նկարումէին կանաչ գետնի վերայ
մարդեր, պատերի վերայ դահլիճներ, օդեղէն ճարտարապետութեան անկ-
ուածոյքը (հիւսուածքը), մենաստանների կամարները, ցայտուն ջրերի շար-
ժական ստուերը և զեփիւռից տարուբերուած թուփերի ստուերքը։ Սոխակը
երգումէր մի մրտենու վերայ, որ մի աւերակ մզկիթի կատարից թափանցե-
լով դուրս էր բարձրացել և արձագանքը կրկնումէին նորա ոլքերը։ Իբն Հա-
մեդը լուսնի փայլողութեան տակ գրեց Բլանքայի անունը երկու քարերի
դահլճի մարմարիոնի վերայ. նա գծագրեց այս անունը արաբական տառա-

նշաններով, որպէս զի ճանապարհորդը մի գաղտնիք աւելի ունենար գուշակելու այս խորհրդաւոր ապարանքի մէջ։

«Ո՛վ Մաւրիտանացի, այս խաղարկութիւնը զարհուրելի են, ասաց Բլանքան, հեռանանք այս տեղերից։ Իմ կեանքիս նպատակը յաւիտեան որոշած ու կնքած է։ Լաւ հասկացիր այս խօսքը. թէ կը ճնաս գուշակելուն, ես կը լինիմ քո անգութ սիրողը. թէ կը դառնաս քրիստոնեայ, ես կը լինիմ քո բաղդաւոր ամուսինը»։

Իշն Համեդը պատասխանեց. «Իբրև քրիստոնեայ, կը լինիմ ես քո Թշուառական ստրուկը, բայց իբրև մուսուլման, կը լինիմ ես քո փառաւոր ամուսնակիցը»։

Ընդհետև այս ազնիւ սիրողքը դուրս եկան այս վտանգաւոր ապարանքից։

Բլանքայի սիրոյ ախտը զօրանումէր օրէ օր և Իշն Համեդինը ածումէր նոյնպիսի աստկութեամբ։ Նա այնպէս զմայլուած էր, սիրուած լինելով ինքն ըստ ինքեան, ոչինչ օտար պատճառից չյաւաջանալով այն զգացողութիւնը, որ նա ազդումէր Բլանքայի մէջ, որ նա չյայտնեց իւր ազգաբանութեան գաղտնիքը Սանտա-Ֆէյի դուքսի աղջկան. նա քաղցրանումէր այն մտածութեամբ, որ ասելու էր նորան իւր հռչակաւոր անունը, նոյն օրին, երբ որ նա յանձն կ'առնուր տալ նորան իւր հարսնութիւնը։ Բայց Իշն Համեդը յանկարծ յետ կանչուեցաւ դէպ ի Թունիս։ Նորա մայրը հիւանդացած լինելով մի անբժշկելի ցաւով, կամէր զրկախառնել իւր որդին և օրհնել նորան, կեանքից հրաժարուելուց յառաջ։ Իշն Համեդը երևեցաւ Բլանքայի ապարանքում. «Ո՛վ Թագուհի, ասաց նա, իմ մայրս մերձ ի մահ հիւանդ է, նա խնդրումէ ինձանից, գնալ և փակել նորա աչքերը։ Կամին դու պահել քո սէրը իմ համար։

—Դու ինձ Թողնումես, հարցրեց Բլանքան գունատուած. կը տեսանեմ քեզ երբ և իցէ։

—Երբ, ասաց Իշն Համեդը։ Ես կամիմ պահանջել քեզանից մի երդումն և առնել քեզ մի երդումն որ մահը միայն կարող էր խախտել։ Հեռեւիր ինձ։

Նոքա դուրս են գնում և հասանումեն մի գերեզմանատան ուր միանգամ Թագուհումեին Մաւրիտանացիք։ Տակաւին տեսանելի էին այս տեղ ուր այն տեղ փոքրիկ գերեզմանական արձանները, որոնց վերայ քանդակագործը մի ժամանակ ձև ակներպել էր մի փակեղ. բայց քրիստոնեայքը այնուհետև փոխանորդել էին դորան մի խաչով։ Իշն Համեդը տարաւ Բլանքային դէպ ի ոտքը այդ արձաններին։

«Ով Բլանքա, ասաց նա, իմ նախահայրս ամփոփուած են այս տեղ։ Ես երդվումեմ նոցա նշխարներով, սիրել քեզ մինչև այն օրը, երբ ահեղ դատաստանի հրեշտակը կը կանչէ ինձ Ալլահի աթոռի առաջև։ Ես խոստա-

նումիմ քեզ, երբէք չընծայել իմ սիրտը մի ուրիշ կնոջ, և առնուլ քեզ ա-մուսնակից ինձ, երբ որ դու կը ճանաչէիր Մարգարէի սուրբ լոյսը։ Ամենայն տարի, այս միջոցիս կը վերադառնամ դէպ ի Գրենադա, տեսանելու, ար-դեօք ծնացե՞լ էիր ինձ հաւատարիմ և կամէիր հրաժարուիլ քո մոլորու-թիւններից։

— Դու ես, ասաց Բլանքան, արտասուքը աչքում, կը սպասեմ քեզ ամենայն տարի. ես կը ծնամ քեզ հաւատարիմ մինչև իմ վերջին շունչը, ինչպէս երդուել եմ, և կ'ընդունեմ քեզ, ինձ ամուսնակից, երբ որ Քրիս-տոնեաների Աստուածը, աւելի հզօր քան թէ քո սիրող աղջիկը, կը շար-ժէր քո անհաւատ սիրտը»։

Իրն Համեդը ուղևորվում է. հողմերը տանում են նորան դէպ ի ծովե-ղերքը Աֆրիկայի. նորա մայրը վախճանուել էր արդէն. նա արտասվում է իր ծնողը, դրկախառնում նորա դաստիը։ Ամիսները անց են կենում. եր-բեմն թափառելով Քարկեդոնի աւերակների մէջ, երբեմն նստելով սուրբ Լուդովիկոսի գերեզմանի վերայ, վերջապէս մտաբերից աքսորած Իրն Սեր-րաջը, որ ահա եկել էր օրը վերստին տանելու նորան դէպ ի Գրենադա։ Իրն Համեդը նաւամուտ է լինում և դարձուցանում նաւի գլուխը դէպ ի Մա-լագա։ Ո՛րպիսի հոգեմտյլութեամբ, ո՛րպիսի երկիւղախառն ուրախութեամբ նկատեց նա Սպանիայի առաջին սարաւանդները։ Արդեօք Բլանքան սպա-սում նորան այդ ծովեզրի մօտ, մտաբերում նա մի անբաղդ արաբացի, որ յաւիտեան պաշտելու էր նորան անապատի արմաւենու տակ։

Յանուար-ցեի աղջիկը ուրացել չէր իւր արած երդմունքը։ Նա խնդրել էր իւր հօրից առաջնորդել նորան դէպ ի Մալագա։ Բարձրութենից այն սա-րերի, որ եղերաւորումէին անբնակ ծովափը, աչքով հետևում էր նա հեռա-ւոր նաւերին և թռուցիկ առագաստներին։ Փոթորկի միջոցին զարհուրելով զննում էր նա մրրկայոյզ ծովը. այն ժամանակ սիրտը նա մաուորապէս փոխադրել իւր անձը ամպերի մէջ, ձգել իւր անձը վտանգաւոր անցքերի մէջ, զգալ իւր անձը ողողուած նոյն կոհակներով, յաւիշտակուած տարուած նոյն փոթորկից որ մերձ էր վտանգելու Իրն Համեդի օրերը։ Երբ որ նա տես-սանում ողբաձայն ծովածիծեռնակը իւր մէջ, դէպ ի յետ թեքած թևե-րով քերել ալիքը և թռչել դէպ ի Աֆրիկայի եզերքը, այնուհետև յան-ձնում նորան ամենայն տեսակ սիրալից խօսքեր, այն բոլոր խելագար ու-տերը որ յաւաչանումեն մի, ախտով սպառուած սրտից։

Մի օր, երբ նա թափառումէր ծովի աւազուտ եզերի վերայ, նկատեց նա մի երկար նաւ, որի բարձրացած առագաստները, թեքած կայմը և նուան-կիւնի առագաստը գուշակումէին Մաւրիտանացոց վաճառական հողին։ Բլան-քան վազում դէպ ի նաւահանգիստը և շուտով տեսանում մի բերբերեան նաւ որ ներս է մտանում վրիպեցնելով ալիքը իւր ընթացքի շառագոյն թևամբ։ Մի Մաւրիտանացի վաճառական հազուստով կանգնած է նաւի պլպնին։ Նորա

յետքում, երկու սև ծառայք սանձը բռնած պահումեն մի արաբական երի-
վար, որի ծխարձակ քթածակերը և ցանցառ բաշը ցուցանումէին միանգա-
մայն նորա կրակոտ բնաւորութիւնը և սարսափը որ ազդումէր նորա մէջ ա-
լիքների աղմուկը։ Նաւակը հասանումէ ցամաքին, ցած է թողում առա-
գաստը, շօշափումէ նաւահանգստի ամբարտակը, մատուցանումէ իւր կողքը։
Մաւրիտանացին դուրս է թռչում եղջի վերայ, որ թնդումէ նորա ղէնքի շա-
ռաչիւնից։ Ծառայքը դուրս են բերում մի քաջ երիվար, ընձառիւծի պէս
խայտաճամուկ, որ խրխնջումէ և թռչտումէ ուրախութիւնից, որ վերստին
գտել էր Տող։ Միւս ծառաներ մեղմութեամբ դուրս են բերում մի քթոց
որի մէջ հանգստացած էր մի վիթ (ջէյրան) արմաւենու խտերի վերայ։
Նորա նուրբ ոտերը կապած էին և ծալած տակումը, մի գուցէ ջարդվէին
նաւի շարժողութենից. այդ վիթը կրումէր մի վզանոց հալուէի հատիկնե-
րից, և մի թերթի վերայ, որ սպասաւորումէ ամրացնելու վզանոցի երկու
ծայրերը, փորագրած էր արաբերէն մի անուն և մի թվական։

Իլանքան ճանաչեց Իբն Համեդին. նա չէ համարձակվում յուցանել
իւր անձը ամբոխին, հեռանումէ և մինը իւր աղախիններից, Դորոթէա ա-
նուն, ուղարկումէ ծանուցանելու Իբն Սերրաջեանին, թէ ինքը սպասումէ
նորան Մաւրիտանացոց ապարանքում։ Իբն Համեդը այս րոպէիս ցուցանու-
մէր քաղաքապետին իւր ֆիրմանը (ճանապարհաթուղթը), կապոյտ տա-
ւերով գրած պատուական մագաղաթի վերայ և ամիրոճած մի մետաքսեայ
պատեհի մէջ։ Դորոթէան մօտենումէ և առաջնորդումէ բաղդատոր Իբն Սեր-
րաջեանին դէպ ի Իլանքայի ոտքը։ Ի՜նչ հոգեվնասիչ ուրախութիւն, երբ որ
երկու սիրողքը կրկին գտանումեն միմեանց երկուատեք (երկու կողմից) հա-
ւատարիմ։ Ի՜նչ բաղդատորութիւն, վերստին տեսանել միմեանց, այդքան
երկարատև բաժանմանից յետոյ. ի՜նչ նորանոր ուխտ և երդումն, յաւի-
տեան սիրելու իրեար։

Երկու սև ծառայքը բերումեն նուիրագոյն հրիվարը, որ փոխանակ
թամքի ունէր մէջքի վերայ մի մորթ առիւծի, ծիրանի գօտով կապած։
Ապա բերումեն վիթը. «Թագուհի, ասումէ Իբն Համեդը, սա մի այծեամն
է իմ աշխարհից, գրեթէ նոյնքան թեթեւաշարժ, ինչպէս դու»։ Նոյն ինքն
Իլանքան կապից արձակումէ այդ սիրուն կենդանին որ ասես թէ շնորհակալ
էր լինում նորան, ձգելով նորա վերայ ամենաքաղցր հայեացք։ Իբն Սեր-
րաջեանի բացակայութենան միջոցին, Սանտա-Ֆէի դուքսի աղջիկը ուսա-
նումէ արաբերէն. նա դեռաշարժ աչքերով կարդաց իւր յատուկ անունը
վիթի վզանոցի վերայ։ Այս վիթը ստանալով իւր ազատութիւնը, հաղիւ
թէ կարողանումէր կանգնուն ճնալ իւր ոտների վերայ որ այնքան երկար կա-
պած էին եղել. նա հանգստանումէ գետնի վերայ, գլուխը տուած իւր տի-
րուհու ծնկին։ Իլանքան տալիս էր նորան դալար արմաւներ (խուրմա) և

փայփայումէր այս փոքրիկ այծեամը անապատի, որի նուրբ մորթը դեռ ևս պահումէր Թունիսի հալուէածառի և վարդի անուշահոտութիւնը։

Իբն Սերրաջեանը, դուքսը Սանտա-Ֆէի և նորա աղջիկը ուղևորուեցան միասին դէպ ի Գրենադա։ Բաղդատոր լծակիցների օրերը անց կացան որպէս յառաջընթաց տարու օրերը. մի և նոյն սէրը, կամ մանաւանդ մի սէր միշտ աճած ու զօրացած, միշտ փոխադարձաբար. բայց և նոյն հաստատութիւնը սիրողների կողմից, իւրեանց հայրենական ջոկ ջոկ կրօնի վերայ։ «Եղիր քրիստոնեայ» ասումէր Բլանքան։—Եղիր մահմետական», ասումէր Իբն Համեդը։ Եւ նորա դարձեալ միանգամ՝ բաժանուեցան միմեանցից, առանց յաղթուելու այն ախտից, որ նորանց քարշումէր միևը դէպ ի միւսը։

Իբն Համեդը կրկին երևեցաւ, երբորդ տարումը, որպէս այն ճանապարհորդ թուրքմենները, որ սէրը գարնան միջոցին յետ է ետրում դէպ ի մեր կլիմաները։ Նա չգտաւ այլ ևս Բլանքային ծովեզրումը. բայց մի նամակ այս աստուածագործած կնոջից իմաց տուեց Արաբացուն Սանտա-Ֆէի դուքսի գնալը դէպ ի Մադրիդ և Դօն Կարլոսի գալը դէպ ի Գրենադա։ Դօն Կարլոսը բերել էր իւր հետ մի ֆրանսիական գերի, բարեկամը Բլանքայի եղբօր։ Մաւրիտանացին կարդալով այս նամակը, զգաց մի ճնշողութիւն իւր սրտի մէջ։ Նա ուղևորուեցաւ Մալագայից դէպ ի Գրենադա շատ ու շատ տխուր նախազուշակութեամբ։ Սարերը երևումէին նորան ահաւորապէս անապատ և նա շատ անգամ՝ գարձուց երեսը նայելու ծովին որի վերայից անցել էր։

Բլանքան, իւր հօր բացակայութեան միջոցին, կարողացել չէր հեռանալ մի եղբօրից որին սիրումէր հնքը. մի եղբօրից որ կամէր ընծայել նորան իւր բոլոր գոյքը, որին և Բլանքան վերատին տեսանումէր զինի եօթնամեայ բացակայութեան։ Դօն Կարլոսը ունէր իւր ազգի բոլոր քաջասրտութիւնը և բոլոր հպարտութիւնը. նա լինելով ահարկու, որպէս նոր աշխարհի տիրապետողը, որոնց մէջ լցուցել էր իւր առաջին պատերազմական գործերը, կրօնասէր որպէս սպանիական ասպետքը, յաղթողը Մաւրիտանացոց, մնուցանումէր իւր սրտի մէջ ընդդէմ անհաւատներին մի ատելութիւն որ ժառանգել էր Սիդի արիւնից։

Ամմաս դը Լօտրէքը, շառաւիղել էր Փօայի հռչակաւոր աղգատոհմից, որի մէջ կանացի գեղեցկութիւնը և այրացի քաջութիւնը համարվումէին ժառանգական պարգև. նա էր կրտսեր եղբայրը Փօա կոմնուհու և քաջ ու անբադդ Օդե դը Փօայի, կալուածատիրոջը Լօտրէքի։ Տանն և ունեցվածք հասակի մէջ, Թոմասը զինուորուեցաւ որպէս ասպետ Բայարդի ձեռնով այն յետախաղութեան մէջ, որ կեանքի գին արժեց այդ աներկիւղ և անստիւտ ասպետին։ Փոքր ինչ յետոյ Թոմասը վերաւորուեցաւ հարուածներից և գերի ընկաւ Պաւիայում, պաշտպանելով իւր Թագաւոր—ասպետը, որ պնուհետև կորցրեց ամենայն բան բայ է պատուէն։

Դօն կարլոս դը Բիվարը, ահանատես լինելով Լօտրեքի քաջութեանը, հոգաբարձու էր եղել երիտասարդ Ֆրանսիացու վէրքին, և շուտով հաստատուեցաւ նոցա մէջ մի այնպիսի քաջալեական բարեկամութիւն որի հիմքն են մեծարանքը և առաքինութիւնը։ Ֆրանչիսկոս առաջինը վերադարձած էր դէպ ի Ֆրանսիա, բայց Կարոլոս հինգերորդը յետ պահեց միւս գերիքը։ Լօտրեքը արժանացել էր այն պատուին, որ է, մասնակից լինել իւր թագաւորի գերութեանը և քնել նորա ոտքի մօտ բանտումը։ Նա մեկնով Սպանիայում, զինի թագաւորի ուղևորութեան, իւր խօսքը երաշխաւոր տալով յանձնած էր Դօն կարլոսին որ և բերել էր նորան Գրենադա։

Երբ Իրն Համեդը ներկայացաւ դօն Բոդրիգի ապարանքում և ներս տարուեցաւ այն դահլճի մէջ, ուր գտանվումեր աղջիկը Սանտա-Ֆէի դուքսի, նա զգաց մի տանջանք որ մինչև այն օրը անյայտ էր եղած նորան։ Դօն-նա Բլանքայի ոտքում նստած էր մի երիտասարդ, որ լուսթեամբ նայումեր նորա վերայ, ասես թէ միտքը յափշտակուելով վերայից։ Ահա երիտասարդը կրումեր կարճ վարտիք դամշի կաշուց և մի բաճկոն նոյն գունով, պնդած մի գօտով որից կախ էր մի թուր զարդարած շուշանի ծաղիկներով։ Մի մետաքսեայ վերարկու ձգած էր նորա ուսերի վերայ և նորա գլուխը ծածկած էր մի փոքրեզերեայ դդակով, որ հովանաւորվումեր փետուրներով. մի ասղնեգործ փողպատ, դէպ ի յետ թեքած նորա կուրծքի վերայ, թոյլ էր տալիս տեսանել նորա մերկ վիզը։ Երկու սև ընչացք, աբանոսի պէս սև, տալիս էին նորա ի բնէ քաղցր երեսին մի այրական և պատերազմական կերպարանք։ Լայն կօշիկներ, որ ցած էին թեքվում և ոլորվումէին նորա ոտերի տակ, կրումէին ոսկեղէն խթաններ, նշանը ասպետութեան։

Մի փոքր հեռաւորութեամբ, կանգնած էր մի այլ ասպետ, կողքը տուած իւր երկար թրի երկաթի խաչին. նա հագնուած էր որպէս միւս ասպետը, բայց երևումեր աւելի հասակաւոր։ Նորա ծանր դէմքը, թէև կրակոտ և ախտաբորբոք, աղդումեր մեծարանք և երկիւղ։ Կալատրավայի կարմիր խաչը ասղնեգործած էր նորա բաճկոնի վերայ, այսպիսի մակագրութեամբ. Վասն նորա և վասն իմ ընտանւոյն։

Մի ակամայ աղաղակ արձակվեցաւ Բլանքայի բերանից, երբ որ նկատեց Իրն Համեդին. «Ով ասպետներ, ասաց նա իսկոյն, ահա օտարականը, որի մասին ես այնքան խօսած եմ ձեր հետ, զգոյշ կացէք, մի գուցէ նա ձեռք բերէ յաղթութիւնը։ Իրն Սերրաջեանները էին այնպիսի ընտիր տղամարդեր ինչպէս սա. և ոչ ոք գերազանցում էր նորանց օրինապատշաճ գնացքով, անվեհերութեամբ և ասպետավայել քաղաքավարութեամբ»։

Դօն կարլոսը յառաջ գնաց դէպ ի Իրն Համեդը. Պարոն Մաւրիտանացի, ասաց նա, իմ հայրս և իմ քոյրս ասել են ինձ ձեր անունը. Ձեզ համարումեն մի աղնիւ և քաջ ոտհմի զաւակ. Դուք ինքներդ Ձեզ նշանաւոր էք կացուցել ձեր նուրբ քաղաքավարութեամբ։ Շուտով իմ տէրը,

կարոլոս հինգերորդը մտադիր է պատերազմ յանալ ընդդէմ Թունիսին, և մեք կը տեսանենք միմեանց, ինչպէս յոյս ունիմ, պատուի հրապարակի մէջ»։

Իբն Համեդը ձեռը դրեց կուրծքին, նստաւ գետնի վերայ առանց պատասխանի տալու, և մնաց աչքը բևեռած Բլանքայի և Լօտրեքի վերայ։ Սա, իւր աշխարհի սեփական հարցասիրութեամբ, զարմանալով քննութիւր Մաւրիտանացու փառաւէղ զգեստը, շողշողուն զէնքը, գեղեցկութիւնը. Բլանքան չէր երևում դժուարացած. նորա բոլոր հոգին ամփոփուած էր իւր աչքերի մէջ. անկեղծ Սպանիացի աղջիկը երբէք աշխատում չէր թաքուցանել իւր սրտի գաղտնիքը։ Իբն Համդը, մի քանի րոպէ լռութենից յետոյ, բարձրացաւ տեղից, գլուխ տուեց դօն Րոդրիքի աղջկանը և հեռացաւ։ Լօտրեքը, Մաւրիտանացու ընթացքի և Բլանքայի հայեացքի վերայ զարմացած, դուրս գնաց մի կասկածանքով, որ շուտով փոխուեցաւ զէպ ի հաւաստութիւն։

Դօն Կարլոսը միայնակ մնաց իւր քուէր հետ. «Ով Բլանքա, ասաց նա. Մեկնէր ինձ. ուստի՞ է յառաջանում այն խռովութիւնը որ պատրաստեց քեզ այս օտարականը։

—Իմ եղբայր, պատասխանեց Բլանքան. ես սիրումեմ Իբն Համեդին, և եթէ նա կամի քրիստոնեայ դառնալ, իմ հարսնութիւնս պատկանում նորան։

—Ա՜հա ինչ բան է, ձայն արձակեց դօն Կարլոսը. մի՞թէ Բիվարեանց դուստրը սիրումէ մի Մաւրիտանացի, մի անհաւատ, մի թշնամի, որ մեք հալածել ենք այս ափարանքներից»։

—Ո՛վ դօն Կարլոս, պատասխանեց Բլանքան. ես սիրումեմ Իբն Համեդին. Իբն Համեդը սիրումէ ինձ. ահա երեք տարի է, որ նա կամէր հրաժարուիլ ինձանից առաւել քան թէ իւր հայրենական կրօնից։ Անշուշտ Թիւն, պատիւ, ասպետական վեհմտութիւն կան նորան մէջ. մինչև իմ վերջին շունչը ես կը պաշտեմ ու կը սիրեմ նորան»։

Դօն Կարլոսը այնքան պատուելի մարդ էր, որ կարող էր զգալ թէ ինչքան աղնուամտութիւն պարունակումէր իւր մէջ Իբն Համեդի խորհուրդը, թէև ցաւումէր այդ անհաւատի կուրութեան վերայ. «Ով թշուառ Բլանքա, ասաց նա, ուր կը տանի քեզ այս սէրը։ Ես յուսացել էի, թէ իմ բարեկամ Լօտրեքը կը դառնար իմ եղբայր։

—Դու խարուած ես, պատասխանեց Բլանքան. ես կարող չեմ սիրել այդ օտարականը։ Իմ զէպ ի Իբն Համեդը սիրոյ մասին պարտական չեմ ոչ ումի համար տալ։ Դու պահիր քո աստուածութեան ուխտը, ինչպէս ես կը պահեմ իմ սիրոյ ուխտը։ Խնայիր միայն, քեզ միխիթարելու համար, որ Բլանքան երբէք դառնալու չէ մի անհաւատի ամուսին։

—Ուրեմն մեր ապագայնիս լինալիք կը լինի աշխարհից, աղաղակեց դօն Կարլոսը։

—Վհ՛ղ կը վայելէ պահպանել դորան, ասաց Բլանքան։ Ա՛յլև ի՞նչ օգուտ այնպիսի որդիք որ դու տեսանելու չես, որ և կ՛այլանդակուին քո ա-ռաքինութենից։ Ով դօն կարլոս, ես զգումեմ, որ մեք վերջին շառաւիղքն ենք մեր ազգատոհմի. մեք շատ ու շատ դուրս ենք սովորական կարգից, քան թէ մեր տոհմը կարող էր ծադկիլ մեզանից յետոյ. Սիդը եղել է մեր նախա-հայրը, նա կը լինի և մեր սերունդը»։ Բլանքան դուրս գնաց։

Դօն կարլոսը թռչումէ դէպ ի Իչն Սերրաքեանը. «Մաւրիտանացի դու, ասումէ նորան, հրաժարուի՛ր իմ քուերից, կամ թէ յանձն առ մե-նամարտութիւն։

—Ընկի՛ր դու յանձնարարութիւն քո քուերից, պատասխանեց Իչն Համեդը, որ յետ պահանջէիր ինձանից այն երդմունքը որ նա արել է ինձ։

—Ո՛չ, կրկնեց դօն կարլոսը. նա սիրումէ քեզ աւելի, քան թէ երբ և իցէ։

—Ո՛հ, արժանի եղբայր Բլանքայի, ձայն արձակեց Իչն Համեդը, կտրելով նորա խօսքը. ես ունիմ ստանալու իմ բոլոր բարեբաղդութիւնը քո ազգատոհմից։ Ո՛վ երջանիկ Իչն Համեդ, ո՛վ բաղդաւոր օր. ես կար-ծումէի թէ Բլանքան խախտել էր իւր հաւատարմութիւնը, փեսայ ընտրե-լով իւր համար Գրանսիացի ասպետը....

—Ո՛չ է ահա քո անբաղդութիւնը, ձայն արձակեց Դօն կարլոսը, անհնարին խռովութեան մէջ. Լօտրեքը իմ բարեկամն է, եթէ դու չլինէիր մէջ տեղում, նա կը լինէր իմ եղբայր։ Հատուցո՛ւմն արա ինձ փոխարէն այն արտասուքին որ դու պատրաստուես իմ գերդաստանին։

—Յօժա՛ր եմ դորան, պատասխանեց Իչն Համեդը. բայց ծնած լինե-լով այնպիսի տոհմից որ գուցէ թէ յաղթահարել է քո տոհմը, այնու ա-մենայնիւ չեմ ես ասպետ։ Ես չեմ տեսանում այս տեղ ոչ ոք, որ ընդհէր ինձ այն արտօնութիւնը, որ տալու էր քեզ կարողութիւն չափելու քեզ իմ հետ, առանց ցած իջանելու քո աստիճանից»։

Դօն կարլոսը, Մաւրիտանացու կշռադատութենից շուարուած, նա-յեց նորա վերայ, զարմացքով և կատաղութեամբ միանգամայն. Ցետոյ ա-սումէ նա յանկարծ. «Ահա ես կը զինուորեմ քեզ իբրև ասպետ. դու ար-ժանի ես այդ պատուին»։

Իչն Համեդը ծունր է խոնարհեցնում դօն կարլոսի առաջև, իսկ սա ընդհատումէ նորան ասպետական կարգ, երեք անգամ զարկելով նորա ուսին իւր Մրի տափակ երեսով. ապա Դօն կարլոսը գօտեորումէ նորան նոյն իսկ Մրով, որ Իչն Սերրաքեանը գուցէ թէ շուտով պիտի ցցէր Դօն կարլոսի կուր-քի մէջ. այսպէս էր հին սովորութիւնը։

Երկուքն ևս վեր են թռչում իւրեանց ձիերի վերայ, դուրս են հր-թում Գրենադայի պարսպից և սլանում դէպ ի աղբիւրը Եղևնածառի։ Մաւրիտանացոց և քրիստոնեաների մենամարտութիւնքը երկար ժամանա-

կից հռչակաւոր էին կացուցել այս աղբիւրը։ Ահն տեղ էր ահա, ուր Մա-
լիք Ալաւէսը կռիւ էր տուել Լէօնեան պոնսի հետ, ուր և կայատրավայի մեծ
իշխանը մահ էր պատրաստել քաջաղն Աբայիդոսին։ Տակաւին տեսանելի
էին այս մարիտանական ասպետի զէնքի մնացորդքը եղևնածառի ճիւղերի
վերայ կախած, և նկատելի էին ծառի կեղևի վերայ մի քանի տառեր գե-
րեզմանական վարագրութեան։ Դօն կարլոսը մտանացոյց արեց Իրն Սերրա-
ջեանին Աբայիդոսի գերեզմանը. «Նմանիր, ձայն տուեց նա, այս քաջ ան-
հատին, և ընդունիր իմ ձեռքից մկրտութիւն և մահ»։

— Կուզէ թէ մահ, պատասխանեց Իրն Համեդը. բայց կենդանի է
Ալլահը և Մարգարէն»։

Ասկեղն ներս մտան նոքա ասպարէզի մէջ և կատաղութեամբ յարձակ-
ուեցան միմեանց վերայ։ Նոքա չունէին այլ զէնք, բայց ի բուեանց թու-
րերից. Իրն Համեդը չէր այնքան յաջողակ կռուի մէջ, ինչքան դօն կարլոսը,
բայց պատուականութիւնը նորա զէնքի, որ մխած (կարծրացրած) էին Դա-
մասկոսում, և նորա արաբական երիվարի թեթևութիւնը տալիս էին նորան
առաւելութիւն ընդդէմ նորա թշնամուն։ Նա թուլրեց երիվարը, ինչպէս
սովոր են Մաւրիտանացիք, և իւր լայն սուր ասպանդակով (զանգուլ)
կտրեց դօն կարլոսի ձիու աջ սրունքը, ծնկի տակից։ Վիրաւորուած ձին
գլորուեցաւ դէպ ի գետին, և դօն կարլոսը այս աջողակ հարուածով շփոթ-
ուած, յառաջ վազեց Իրն Համեդի վերայ, թուրը բարձրացուցած։ Իրն
Համեդը թռչուն ցած և հանդիպումն դօն կարլոսին անվհերութեամբ.
նա յետ է գարկում հարուածները սպանիացու, որ փշրում իւր թուրը
դամասկացի երկաթի վերայ։ Երկու անգամ խաբուելով բաղդից, թափում
դօն կարլոսը կատաղութեան արտասուք, և ձայն է տալիս դէպ ի իւր թշնա-
մին. «Զարկիր, Մաւրիտանացի, զարկիր. զինաթափ դօն կարլոսը ճա-
կատը դէմ է դնում քեզ և քո բոլոր անհաւատ ազգին»։

— Կու կարող էիր սպանել ինձ, պատասխանում Իրն Սերրաջեանը,
բայց ես երբէք մտածել չեմ հասուցանել քեզ և ոչ ամենաւրքը վէրք։ Ես
կամեցած եմ միայն ապացուցանել քեզ, թէ ես արժանի էի լինելու քո եղ-
բայր, և թէ դու չունէիր տեղիք արհամարհելու ինձ։

Այս բոպէիս նկատումն մի փոշեղէն մրրիկ։ Լօտրեքը և Բլանքան
շտապումն հեծած երկու ֆեցեան մատակների վերայ, որ աւելի սրընթաց
էին քան թէ հողմերը։ Նոքա հասանումն եղևնածառի աղբիւրին և տես-
նումն կռիւը դադարեցուցած։

«Այս յաղթուած եմ, ասաց դօն կարլոսը. այս ասպետը բաշխել է
ինձ իմ կեանքը։ Ով Լօտրեք, գուցէ դուք լինելու էիք աւելի բաղդաւոր քան
թէ ես։

— Իմ վէրքս, ասաց Լօտրեքը աղնիւ ու շնորհալից ձայնով, ներում-
ն ինձ յանձն չառնուլ մենամարտութիւնը այս արժանաւոր ասպետի հետ։

Ես չկամիմ, յաւելացրեց նա կարմրելով, գիտել ձեր վէճի նիւթը և միջամուխ լինել ձեր գաղտնիքի մէջ, որ գուցէ մահ էր բերելու իմ սրտին։ Իմ բացակայութիւնս շուտով կը նորոգէ խաղաղութիւնը ձեր մէջ, եթէ չկամեր Բլանքան հրամայել ինձ մնալ այս տեղ սպասաւորելու նորան։

— Ասպետ, ասաց Բլանքան, դուք կը մնաք իմ եղբօր մօտ, դուք կը հանգրէք ինձ ձեր քոյր։ Բոլոր սիրտերը այս տեղ դգումեն աղէտք. դուք կ'ուսուցանէք մեզ համբերել կեանքի ցաւերին»։

Բլանքան կամեցաւ հարկադրել երէք ասպետը հաշտուիլ միմեանց հետ. երեքեան ևս հրաժարուեցան դորանից. «Ես ատում եմ Իրն Համեդին, ձայն տուեց դօն Կարլոսը։ — Ես նախանձում եմ նորան, ասաց Լօտրեքը։ — Եւ ես, ասաց Իրն Համեդը, պատմում եմ դօն Կարլոսին և ցաւում եմ Լօտրեքի վերայ, բայց կարող չեմ սիրել նորանց։

«Համբերենք միշտ, ասաց Բլանքան. և վաղ կամ անագան, բարեկամութիւնը կը յաջողէ պատուին։ Թող այն տրտում անցքը, որ մեզ ժողովել է այս տեղ, յաւիտեան անցած մնայ Պրենադայում»։

Իրն Համեդը, սկսեալ այս րոպէից, հաղար անգամ աւելի սիրելի դարձաւ Սանտա-Ֆէի դուքսի աղջկան. Սէրը սիրում քաջութիւն. այլ ևս ոչինչ պակաս չէր Իրն Սերրաջին. պատճառ, նա քաջ էր, և դօն Կարլոսը պարտական էր նորան իւր կեանքը։ Իրն Համեդը, խորհրդակցութեամբ Բլանքայի, մի քանի օր հեռի մնաց պալատից, որպէս զի մեղմանայ դօն Կարլոսի բարկութիւնը։ Մի խառնուրդ քաղցր և դառն ախտերի լցուցանում էր Իրն Սերրաջեանի սիրտը. եթէ մի կողմից ապահովութիւնը որ նա սիրուած էր այդքան հաւատարմութեամբ և ջերմութեամբ, էր նորա համար մի անսպառելի աղբիւր երանութեան, միւս կողմից հաւատարութիւնը որ երբէք կարող չէր նա երջանիկ լինել առանց ուրանալու իւր հայրենական կրօնը, ճընշում էր Իրն Համեդի հոգին։ Արդէն անցել էին շատ տարիներ, առանց օգուտ բերելու նորա ցաւերին. արդեօք պիտի՞ նա տեսանէր, որ այսպէս անցանելու էին նորա մնացած օրերը։

Նա ընկղմած էր շատ ու շատ ծանր և քնքուշ խորհրդածութիւնների անդունդքի մէջ, և ահա մի երեկոյ լսեց նա այն քրիստոնէական աղօթքի զանգակի ձայնը, որ ծանուցանում օրի վերջը։ Նա մտաբերից ներս մտաւ Բլանքայի Աստուծոյ տաճարը և խրատ հարցանել ընութեան տիրոջից։

Նա դուրս է երթում և հասանում դրանը մի հին մզկիթի որ յեղափոխած էր եկեղեցի հաւատացեալների ձեռով։ Սիրտը տրտմութենից և կրօնից ըմբռնուած, ներս է մտանում նա տաճարի մէջ, որ մի օր էր տաճարը իւր Աստուծոյ և իւր հայրենիքի։ Աղօթքը աւարտուած էր արդէն. այլ ևս ոչ ոք չկար եկեղեցու մէջ։ Մի տուրբ մտայլ թափանցութեամբ սիւների բազմութեան մէջ, որ նմանում էին մի կանոնաւոր կերպով տնկած անտառի ծառաբների։ Արաբացոց թևերև ճարտարապետութիւնը զուգաւորուել էր

գուրթական ճարտարապետութեան հետ և, ոչինչ բան չկորուսանելով իւր գեղեցկութենից, ստացել էր մի ծանրութիւն աւելի հրաւէր մատուցանող խորհրդածութիւններին։ Մի քանի լապտերներ աղօտապէս լուսաւորում էին կամարների խորութիւնը. բայց վառած շատ մոմերի լուսաւորութեամբ տեսանելի էր սրբարանի շրջղուն սեղանը, ուր փայլատակումներն ոսկի և աղնիւ քարեր։ Սպանիացիք իւրեանց փառքը դնում են այն բանի մէջ, որ կողպտեն իւրեանց վերայի հարստութիւնքը, զարդարելու դոցանով իւրեանց աստուածպաշտութեան նիւթերը. և կենդանի Աստուծոյ պատկերը ասղնագործ քօղերի մէջ դրած, մարգարտահիւս և գոհարակապ պսակներով զարդարած, պաշտում է մի կիսամերկ ժողովրդից։

Ո՛չ մի նստարան նկատելի չէր ընդարձակ ներքին տարածութեան մէջ. մի մարմարիոնեայ սալայատակ ամիոփելով իւր տակին գերեզմանները, հաւասարապէս սպասաւորում էր մեծամեծներին և փոքրներին, որ այն տեղ տարածութեան իւրեանց անձը Տիրոջ առաջև։ Իշն Համեղը ծանրաշարժ յառաջ էր գնում եկեղեցու անապատ միջնավայրումը, որ թնդում էր միայն նորա քայլերի շառաչիւնից։ Նորա հոգին տարուբերվում էր այն յիշատակներից, որ այս հին շինուածը Մարիամանացոց կրօնի պատկերացնում էր նորա յիշողութեանը, և այն ախտերի մէջ որ կրօնը ծնուցանում էր նորա սրտում։ Նա նշմարեց մի սիւնի ոտքում մի անշարժ կերպարանք, որ սկզբում համարեց մի արձան գերեզմանի վերայ։ Նա մօտենում էր նորան, և որոշում է մի երիտասարդ ծնկների վերայ, ձակատը պատկառանքով խոնարհեցուցած և երկու ձեռքը խաչաձև դրած կուրծքի վերայ։ Այս ասպետը չշարժվեցաւ ամենևին, լսելով Իշն Համեղի քայլերի աղմուկը. ոչ մի զբօսանք, ոչ մի արտաքին նշան կենդանութեան չպղտորեց նորա խորին սրտով աղօթքը։ Նորա թուրը ձգած էր գետնի վերայ նորա առաջև, և նորա վեհապարդ դէմքը դրած էր մարմարիոնի վերայ, նորա կողքում։ Երևումէր, որպէս թէ նա բևեռած էր այս կացութեան մէջ մի կախարդագործութեամբ։ Սա Լօտրեքն էր. «Ո՞հ, ասաց Իշն Սերրաջեանը ինքն իւր մէջ. այս պատանի և գեղեցիկ Ֆրանսիացին խնդրում է Աստուծուց մի նշանաւոր շնորհ. այս պատերազմողը, արդէն իւր քաջութեամբ հռչակուած, այս տեղ թափում է իւր սիրտը երկնաւոր թագաւորի առաջև, իբրև ամենախոնարհ և շատ ու շատ անշնչան մարդ։ Ուրեմն թէղ աղօթենք նոյնպէս առ Աստուածը փառքի ասպետների։

Իշն Համեղը կամէր տարածել իւր անձը մարմարիոնի վերայ, և ահա նկատեց նա մի լապտերի լուսատուութեամբ արաբական տառ անշնաններ և մի տող կուրանից, որ երևումէին մի կիսաթաւի գաջի տակում։ Խղճմտութիւնը յառաջացան նորա սրտի մէջ, նա շտապեցաւ թողել շինութիւնը, ուր մտածում էր անհատատարիմ դառնալ իւր կրօնին և իւր հայրենիքին։

Վերեզմանատունը որ շրջապատուէր այս հին մզկիթը, էր մի տեսակ այգի, ուր տնկած էին նարնջենիք, մրտենիք և արմաւենիք, որ և ջրըվուէին երկու աղբիւրներով. մի մենաստան ձգվուէր շրջակայքում։ Իրն Համեդը, անց կենալով սիւնազարդ սրահներից միևի տակից, նկատեց մի կին որ կամէր ներս մտանել եկեղեցու մէջ։ Թէպէտ այդ կինը փաթաթուած էր մի քօղով, Իրն Սերրաջլանը ճանաչեց Սանտա-Գէի դուքսի աղջիկը. նա դադարեցրեց նորան և ասաց. «Եկիր ես դու որոնելու Լօտրեքին այս տաճարի մէջ»։

— Ո՛չ այդ անարժան նախանձաւորութիւնը, պատասխանեց Բլանքան. եթէ այլ ևս չսիրէի ես քեզ, ապա ասելու էի քեզ այդ. ես անարժան կը համարէի խաբել քեզ։ Ես եկել եմ այս տեղ, աղօթելու քո համար. դու միայն ես այժմ իմ ուխտերի նպատակը. ես մոռանում եմ իմ հոգին քո հոգու համար։ Չէր պիտոյ ինձ արբեցնել քո սիրոյ թունով, կամ թէ հարկաւոր էր յանձն առնուլ ծառայել այն Աստուածուն որին ծառայում ես։ Դու վրդովուում ես իմ բոլոր գերդաստանս. իմ եղբայրս ատում քեզ, իմ հայրս ընկճած է ցաւից, որովհետև ես հրաժարուում ընտրել ինձ ամուսնակից։ Մի՛ թէ նկատում չես դու, որ իմ առողջութիւնս աւերուում։ Տես այս պատպարանը մահու, դա կախարդող է. ես շուտով կը հանգստանամ այս տեղ, եթէ դու չկամիս շտապել ընդունել իմ հաւատը քրիստոնեաների սեղանի ոտքում։ Պատերազմները, որոնց համբերում ես իմ սրտի մէջ, աւ սակաւ սակաւ փորումն կեանքիս հիմքը. այն ախտը որ դու ազդում ես իմ մէջ, չէ միշտ պահպանելու իմ խախուտ գոյութիւնը. մոռացիր, ով Մաւրիտանացի, թո՛ղ խօսեմ քո հետ քո լեզուով, այն կրակը որ վառում ձրագը, է նոյն և կրակը որ սպառում նորան։

Ընդհէն վերջացած է գործը. Իրն Սերրաջլանը յաղթուած է. նա կամի հրաժարուիլ իւր կրօնի մոլորութիւններից. բաւական երկար միջոց պատրաստել է նա։ Երկիւղը, մի գուցէ Բլանքան մեռանէր, յաղթող է հանդիսանում ընդդէմ ամենայն միւս ախտի Իրն Համեդի սրտում։ Վերջապէս, աստուձր նա ինքն իւրեան, գուցէ թէ քրիստոնեաների Աստուածն է ճշմարիտ Աստուածը։ Այս Աստուածը է միշտ ալնիւ հոգիների Աստուածը, որովհետև նա է Աստուածը Բլանքայի, գօն կարլոսի և Լօտրեքի։

Այս մտածութեան մէջ, Իրն Համեդը անհամբերութեամբ սպասում վազուեան օրին, որ իւր խորհուրդը յայտնէ Բլանքային, և փոխէ մի տրտում ու արտասուալից կեանք դէպ ի մի ուրախ և բաղդաւոր կեանք։ Նա չկարողացաւ գնալ դէպ ի ապարանքը Սանտա-Գէի դուքսի, բայց միայն երեկոյին։ Նա տեղեկութիւն էր ստացել, որ Բլանքան իւր եղբօր հետ միասին գնացել էր Ջենեարալիֆ, ուր Լօտրեքը ինջուք էր պատրաստել։ Իրն Համեդը անհանգիստ լինելով նոր կասկածանքից, անյապաղ շտապում Բլանքայի քամակից։ Լօտրեքը կարմրում տեսանելով Իրն Սերրաջլանի երե-

ւելը։ Դօն կարլոսի մասին պիտի ասել, թէ նա ընդունից Մաւրիտանացին մի սառն քաղաքավարութեամբ, որից այնու ամենայնիւ նկատելի էր մի մեծաբական պատիւ։

Լօտրեքը հրամայել էր սեղանը զարդարել Սպանիայի և Ափրիկայի ամենընտիր պտուղներով Ջեներալիֆի դահլիճներից մինի մէջ, որ ասվում էր Ասպետների դահլիճ։ Այս տեղ բոլոր պատերի վերայ կախ էին տուած Մաւրիտանացոց յաղթողների, իշխանների և ասպետների պատկերքը, զոր օրինակ Պելասգոսի, Սիդի, Կորդովական Գոնզալվի։ Գրենադայի վերջին թագաւորի թուրը ամրացուցած էր այս պատկերների ցածում։ Իրն Համեդը փակեց իւր ցաւը իւր մէջ և ասաց միայն որպէս առիւծը եղպտսեան առաւկի մէջ, աչք ածելով այս նկարների վերայ. «Մեք չգիտենք պատկերահանութիւն»։

Երբ նաւամիտ Լօտրեքը, տեսանելով Իրն Սերրաջեանի աչքը ակամայ դարձուցած դէպ ի Բօաբդիլի Թուրը, ասաց նորան. «Ով Մաւրիտանացի ասպետ, եթէ գուշակած լինէի, թէ դուք մեծարելու էիք ինձ մանաւանդ լինելով այս ինջյքիս, ես Ձեզ ընդունելու չէի այս տեղ։ Մարդիկ ամենայն օր կորուսանումեն մի թուր, և ես տեսել եմ ամենաքաջը թագաւորների միջից, իւր սուրը թող տալով իւր բաղդաւոր թշնամուն։

—Ո՜հ, ձայն տուեց Մաւրիտանացին, ծածկելով երեսը իւր հանդերձի դրօշակով. Թուրը կարելի է կորցնել, ինչպէս Ֆրանչիսկոս առաջինը. բայց ինչպէս Բօաբդիլն է կորուսել...։

Պիշերը վերայ հասաւ. բերեցին ճրագները. խօսակցութիւնը փոխեց իւր ընթացքը։ Խնդրեցին դօն կարլոսից պատմել Մեքսիկոյի յայտնագործութիւնը. նա խօսեց այն անծանօթ աշխարհի վերայ մի մեծահանդէս ճարտարախօսութեամբ որ սեփական է սպանիական ազգին, նա պատմեց Մօնտեզումա թագաւորի անբաղդութիւնքը, Ամերիկացոց բարքը, կաստիլիացոց քաջութեան հրաշները, այլև իւր հպարենակիցների նոյն իսկ անգութ ընթացքը, որ նորա աչքում երևումէին ոչ նախատանքի և ոչ գովասանութեան արժանաւոր։ Այս պատմութիւնքը ըմպելանք էին բերում Իրն Համեդի վերայ, որի բորբոք սերը զարմանալի պատմութիւնների հետ ցուցանումէր արաբական արիւնը։ Նա իւր կողմից նկարագրեց Տաճիկների թագաւորութիւնը որ այն միջոցին հիմնարկուել էր Կոստանդնուպօլսի աւերակների վերայ, թէպէտ չկարողացաւ ծածկել իւր ցաւը Մահմետի առաջին թագաւորութեան վերայ. այն ժամանակի վերայ, երբ հաւատացեալների հրամայողը տեսանումէր իւր շրջակայքում փայլելով Զոբայդը, Ծաղկը գեղեցկութեան, Զօրութիւնը սրտերի, Տուրմանտը և այն աղնիւ գաղկը նմին որ ծառայ էր սկրզ պատճառով։ Իսկ Լօտրեքը նկարագրումէ նորը քաղաքավար պալատը առաջին Ֆրանչիսկոսի, ճարտարութիւնքը վերածնելով բարբարոսութեան միջից, պատիւը, օրինապատշաճութիւնը, ա-

պետականութիւնը առաջին օրերի, միաւորուած աշխարհաշէն գարերի ներքուեան հետ, գուեական փոքրիկ բուրգերը յունական սիւնակարդով զարդարած և գաղղիացի կանայքը վայելչացնելով իւրեանց փառաւոր հագուստի ճոխութիւնը աթենական փառահեղութեամբ։

Ոչ կնի այս խօսակցութեան, Լօտրեքը կամենալով զուարճացնել այս խնջոյքի թագուհին, վեր կալաւ մի կիթառ և երգեց այս փոքրիկ տաղը, որ նա յարմարել էր մի յայտնի եղանակի վերայ, որ սովորական էր իր աշխարհի սարերում։

«Ի՛նչքան քաղցր է յիշատակը
Իմ ծննդեան աշխարհի.
Իմ քոյր, ինչ դեղեցիկ այն օրերը
Ֆրանսայի.
Ո՛վ իմ աշխարհ, եղեր դու միշտ
Ինձ սիրելի.
Միտքդ դու բեր, երբ մեր մայրը,
Մօտ մեր խուղի կրակարանի,
Արտի վերայ մեզ սեղմուկէր,
Ի՛մ սիրելի.
Ու մեք նորա ճերմակ մազեր
Պաչումէինք երկուքս,
Քոյր իմ կարծէ ես միտք բերել
Այն ամրոցը որ լուանուէր Դօռ գետը,
Եւ այն շատ հին աշտարակը,
Անունը Մօր.
Ուր զանգակը դէպ վերադարձ զարկուէր.
Ցիշո՞ւմես դու այն օրը։
Ցիշո՞ւմես դու խաղաղ լիճը
Որի վերայ թռթռուէր ծիծեռնակը,
Այն հողմը որ ոլորուէր
Թոյլ եղէգը.
Եւ արևը ջրի վերայ մտանելով
Այնպէս սիրուն։
Ո՛հ, ո՛վ ինձ կը տայ իմ հեղինէն
Եւ իմ սարը, իմ մեծ կաղնին.
Նոցա քաղցր յիշատակը
Միշտ տոչորուէ իմ սիրտը.
Իմ աշխարհը միշտ կը լինի
Հոգուս սէրը։

Լ՝ծտրեքը աւարտելով վերջին տունը, իւր թաթիպանով սրբեց աչքից մի արտասուք որ դուրս էր ճնշել նորանից իւր սիրուն աշխարհի, Գրանսիայի յիշատակը։ Ահա գեղեցիկ գերի մարդու ցաւերը շատ զգալի եղան Իբն Համեդի սրտին, որ Լ՝ծտրեքի նման արտասվումեր իւր հայրենիքի կորուստը։ Խնդրեցին և նորանից, որ առնու կիթառը, բայց նա յանձն չառաւ, ասելով որ նա գիտէր միայն մի տաղ որ և լինելու չէր այնքան ախորժելի քրիստոնեայ մարդերի համար։

Այդ դրբա անհատանելին էին, որ հառաչումն մեր յաղթուածներին, պատասխանեց գօն կարլոսը արհամարհութեամբ, ուրեմն կարող էք դուք երգել. արտասուքը թոյլ տուած են յաղթուածներին։

— Լա՛յ, ասաց Բլանքան, և այդ պատճառով մեր հարքը, մի ժամանակ գտանուելով Մաւրիտանացոց լծի տակ, թողել են մեզ այնքան շատ ողբական տաղեր։

Լ՝ինուհետև Իբն Համեդը երգեց այս տաղը որ նա ուսել էր մի բանտատեղջից իբն Սերրաջեանց ցեղի.

Թագաւորը Գօն Ջուան
Մի օր ձի հեծած շրջելով,
Տեսաւ սարի վերայ
Սպանիայի Գրենադան.
Եւ ասաց նրան յանկարծ.
Դու սիրուն քաղաք,
Ահա քեզ իմ սիրոյը
Ընտիս հետ միասին։

Ես կ՝առնում քեզ ինձ կին,
Կը տամ քեզ ընծաներ
Կորդովա, Սեվիլլա.
Փառաւոր զգեստներ,
Ծանրագին գոհարներ,
Ապացոյց իմ սիրոյ։

Ասում Գրենադան,
Մեծ արքայ Լէօնեան.
Մաւրի հետ կապած եմ,
Նորա հետ պսակուած եմ.
Պահիր քո ընծայքը.
Ես ունիմ շատ զարդեր,
Իմ մէջքին ճոխ գօտի
Եւ սիրուն զաւակներ։

Ա՛յսպէս միշտ էր քո խօսք,
Նենգաւոր, խաբեբայ,
Մահու չափ անիրաւ,
Ուխտապրո՜ժ Գրենադա.
Անիծեալ քրիստոնեայ,
Սարրաջի զաւակի
Վայելումէ թագ, գահ.
Ա՛յսպէս էր ճակատագիր։

Ոչ մի ուղղ տանուամ չէ
Մեղինեան ուխտաւոր
Դէպ Հանգիստ Մահմեթի,
Ուր կայ տուրը ձկնարան.
Անիծեալ քրիստոնեայ,
Սարրաջի զաւակի
Վայելումէ թագ, գահ.
Ա՛յսպէս էր ճակատագիր։

Ով սիրուն Ալհամպրա,
Ուր պաշտվումէ Ալլահ.
Դու քաղաք ջրաւէտ,
Գետահոս դաշտերով.
Անիծեալ քրիստոնեայ,
Սարրաջի զաւակի
Վայելումէ թագ, գահ.
Ա՛յսպէս էր ճակատագիր։

Պարզմտութիւնը այս ոլբական տաղի շարժեց մինչև հպարտ գօն կարլոսի սիրտը, թէպէտ կային նորա մէջ անէծք քրիստոնեաների վերայ թափուած։ Գօն կարլոսին շատ ցանկալի եղած կը լինէր աղատ մնալ երգելուց, երբ որ եկաւ նորա կարգը. բայց աստիճական քաղաքավարութեամբ դէպ ի Լօտրեքը պարտ համարեց նա տեղիք տալ նորա խնդրանքին։ Իբն Համդը տուեց կիթառը Բլանքայի եղբօրը, որ այնուհետև սկսաւ փառաւորել իւր հռչակաւոր նախահօր, Սիդի քաջագործութիւնքը։

«Լերը Սիդը ղէնուորած, քաջութեամբ պանծալի,
Պատրաստ էր երթալու ընդդէմ Աֆրիկայի.
Իւր Շիմէն ամուսնու ոտքում նա նըստած,
Կիթառով երգումէր այս տողեր պարծանքի։

Հ. Յիմեն Նրան ասաց, Երէք, կռուիր Մաւրի հետ,
Այս կռուից մանաւանդ յետ արի դու յաղթող։
Թէ ինձ շատ սիրումէ Բօդրիգը, կ'աւատատ,
Եթէ նա իւր սիրուց աւելի կը պաշտէ պատիւը։

Տուէք ինձ սաղաւարտս, տուէք ինձ իմ նիզակ,
Ես կամիմ ցուցանել Թէ Բօդրիգ տղամարդ է,
Կռուի մէջ կարող է քաջութեամբ մեռանել
Իւր սիրոյ, իւր պատուի անվեհեր մարտիրոս։

Ո՛վ դու Մաւր, նուրբ վարքով հռչակուած,
Զուր էր քո գանգատը Թէ իմ երդ յաղթական
Լինելու էր մի օր խելագար խօսք, զրոյց։
Երբէք ոչ. պէտ ցուցակ պարծանքի և սիրոյ։

Ահա ի մեր հայրենի Անդալուզ աշխարհից,
Ասպետ հին քրիստոնեայք կ'երգեն իմ քաջութիւն,
Ասելով. կեանքից վեր համարեց Բօդրիգը
Իւր Աստուած, իւր արքայ, իւր Շիմեն, իւր պատիւ։

Դօն Կարլոսը, երգելով այս խօսքերը մի պրական և բարեհնչիւն ձայնով, երևեցաւ այնպէս հպարտ և վսեմ, որ դու կը համարէիր նորան նոյն ինքն Սիդը։ Լօտրիքը բաժանորդ էր իւր բարեկամի պատերազմական հոգեզմայլութեանը, բայց Իրն Սերրաջեանը գունաթափուել էր, լսելով Սիդի անունը։

«Այս ասպետը, ասաց նա, որին «քրիստոնեայք ասումեն» Ծաղկը պատերազմական դաշտերի» կրումէ մեր մէջ անունս «Անգութ»։ Ո՜հ, եթէ նորա ազնուամտութիւնը հաւասար եղած լինէր նորա քաջութեանը....

— Նորա ազնուամտութիւնը, պատասխանեց դօն Կարլոսը կտրելով Իրն Համեդի խօսքը, շատ գերազանց էր նորա քաջութենից, և Մաւրիտանացիք միայն կարող էին բամբասել այն հերոսը (քաջ տղամարդը), որից յառաջացել է իմ ազգատոհմը։

— Ո՛նչ ես ասում դու, ձայն արձակեց Իրն Համեդը, վեր թռչելով իւր տեղից, ուր նստած էր նա կիսով չափ տարածուած. դու դասո՞ւմես Սիդը քո նախահարց մէջ։

— Այո՛ նորա արիւնը հոսումէ իմ երակների մէջ, պատասխանեց դօն Կարլոսը, և ես խոստովանումեմ իմ անձը շահաւիղած նորա աղնիւ սերմից, մի և նոյն ատելութեամբ վառուած դէպ ի թշնամիքը իմ Աստուծոյ.

— Ուրեմն, ասաց Իրն Համեդը նայելով Բլանքայի վերայ, դուք պատկանումէք այն Թիվարեանց ցեղին, որ Գրենադայի տիրապետութենից յետոյ յարձակուեցան անպաշտպան Իրն Սերրաջեանց վերայ և սպառեցին կեան-

քից մի աշխոյժ ասպետ այս անունով, որ կամէր պաշտպանել իւր նախա-
հարց գերեզմանը։

—Մաւրիտանացի՛. ձայն տուեց դօն կարլոսը, բարկութեամբ բոր-
բոքած. իմացիր, որ ես չկամիմ լսել ոչինչ հարցուփորձ։ Եթէ այսօր ես
ունիմ ձեռքումս Իբն Սերրաջեանց կողոպուտը, իմ նախահարքս ստացել
են դորան իւրեանց արիւնի գնով և իւրեանց սրի զօրութեամբ։

—Մի խօսք ևս, ասաց Իբն Համեդը առաւել և առաւել վրդոված.
մեք մեր աքսորանքի մէջ անգիտացել ենք թէ Բիվարեանքը կրել էին վեր-
տատութիւնս Սանտա-Ֆէ. այս է ահա, որ սխալանքի մէջ է ձգել ինձ։

—Այս Բիվարն էր, յաղթողը Իբն Սերրաջեանց, պատասխանեց դօն
կարլոսը, որին չնորհուեցաւ այդ վերտատութիւնը ֆերդինանդոս կաթո-
լիկից»։

Իբն Համեդը գլուխը քարշ ձգեց կուրծքի վերայ. նա կանգնած մնաց
զարմացած դօն կարլոսի, Լօտրեքի և Բլանքայի մէջ տեղ, երկու հեղեղ ար-
տասուքի թաւալուեցան նորա աչքից նորա գօտու մէջ ցցած դաշնակի վերայ։
«Ներեցէք, ասաց նա. տղամարդերին, գիտեմ ես, անարժան է արտասուք
թափել. այսուհետև իմ արտասուքս թափուելու չէն պատ, թէպէտ ինձ
մնումէր շատ բան արտասուելու. լսեցէք։

«Ով Բլանքա, իմ սէրս առ քեզ նոյնքան վառ է, որքան Արաբիայի
պրոն հողմերը։ Ես յաղթուած եմ, ես կարող չէի այսուհետև ապրել ա-
ռանց քո։ Երեկ տեսանելով այս ֆրանսիացի ասպետը աղօթքի մէջ, լսե-
լով քո խօսքերը եկեղեցու գերեզմանատան մէջ, համոզուած եմ խոստո-
վանել քո Աստուածը և ընծայել քեզ իմ հաւատը»։

Մի շարժումն ուրախութեան Բլանքայի մէջ, և մի անակնկալ խըն-
դութիւն դօն կարլոսի կողմից, ընդհատեց Իբն Համեդի խօսքը. Լօտրեքը
ծածկեց երեսը իւր երկու ձեռքով։ Մաւրիտանացին գուշակեց նորա մտածու-
թիւնը և շարժելով գլուխը մի սիրտ պատառող ժպտմամբ, ասաց. «Աս-
պետ, մի լինիր ամենևին անյոյս. և Դու, Բլանքա, արտասուիր յաւիտեան
վերջին Իբն Սերրաջեանի վերայ»։

Բլանքան, դօն կարլոսը, Լօտրեքը, երեքեան ևս բարձրացրեցին
ձեռքը դէպ ի երկինք և ձայն արձակեցին. «Վերջի՛ն Իբն Սերրաջեան»։

Մահագործումն լուութիւն. երկիւղ, յոյս, ատելութիւն, սէր, հիա-
ցումն, նախանձախնդրութիւն խառնուեցան բոլոր սիրտերը. Բլանքան շու-
տով վայր է ընկնում ծնկների վերայ։ «Աստուածդ բարութիւնն, ասում
նա, դու արդարացնումես իմ ընտրութիւնը. ես կարող չէի սիրել, եթէ ոչ
հերոսների շառաւիղը»։

—Իմ քոյր, ձայն տուեց դօն կարլոսը զայրացած, մոռացիր, որ դու
գտանվումես այս տեղ Լօտրեքի առաջև։

—Դօն կարլոս, ասաց Իբն Համեդը, չետ պահիր քո բարկութիւնը։

Ե՛ս կը դարձուցանեմ ձեզ խաղաղութիւն»։ Ապա խօսքը ուղղելով դէպ ի Բլանքան, որ դարձեալ նստել էր, ասաց.

«Ով Հուրիդ երկնքի, ոգիդ սիրոյ և գեղեցկութեան, Իբն Համեդը կը լինի քո ծառան մինչև իւր վերջին շունչը. բայց հասկացիր նորա վատաբաղդութեան բոլորամասն բովանդակութիւնը։ Ամն ալևորը որ պաշտպանելով իւր տուն ու տեղը, զոհուեցաւ քո նախահօր ձեռով, էր իմ հօր հայրը. պլև լսիր դու մի գաղտնիք, որ ես ծածկել եմ քեզանից, կամ թէ մանաւանդ դու մոռանալ էիր տուել ինձ։ Երբ որ ես առաջին անգամն ևկայցելութիւն առնելու այս տխուր հայրենիքիս, իմ պլևաւոր դիտաւորութիւնս այն էր, որ որոնեմ որ և իցէ զաւակը Բիվարի, որ կարող էր հաշիւ համար տալ այն արիւնի մասին, որ նորա հայրերը թափել էին։

—Ճարտար է, ասաց Բլանքան մի ցաւալից, բայց մեծահոգութեամբ բարեխառնած ձայնով. ինչ է քո խորհուրդը։

—Այն միայն, որ արժանի էր քեզ, պատասխանեց Իբն Համեդը. դարձուցանել քեզ քո երդումները, իմ մշանջենաւոր հրաժարմամբս և մահովս հատուցանել այն պարտքը որ մեք, թէ մինս և թէ միւսը, պարտական ենք մեր աստուածներին, մեր հայրենիքի և մեր ազգատոհմերի բարեկամութեանը։ Եթէ երբ և իցէ իմ պատկերս կը ջնջուի քո սրտից, եթէ ժամանակը, որ ամենայն բան կործանումէ, կը հանէ քո մխիթարութենից Իբն Սերրաջլանի յիշատակը, այնուհետև... այս ֆրանսիացի ասպետը... Դու պարտական ես յանձն առնուլ այս գործքանը, քո նըբօր կամքը լցուցանելու համար։

Լօտրեքը բարձրացաւ տեղից սաստկութեամբ և գրկախառնեց Մաւրիտանացին, ասելով. ով Իբն Համեդ, մի կարծիր թէ դու կարող ես յաղթել ինձ քո ազնուամտութեամբ. ես ֆրանսիացի եմ, Բայեարդը գինուորել է ինձ ասպետական պատուով. ես թափել եմ իմ արիւնը իմ թագաւորի համար. ես պիտի լինիմ, ինչպէս իմ ասպետահայրը և ինչպէս իմ իշխանը, աներկիւղ և անձնասատ։ Եթէ դու կը ճեաս մեր մէջ, ես կը խընդրեմ և կ'աղաչեմ դօն կարլոսը հարմնացել քեզ իւր քոյրը. եթէ դու կը թողուս Գրենադան, այնուհետև երբէք մի խօսք իմ սիրոյ մասին չէ պղտորելու քո սիրականի սիրտը։ Դու երբէք տանելու չես քո աքսորանքի մէջ այն տրտում գաղափարը, թէ Լօտրեքը, լինելով անզգայ դէպ ի քո առաքինութիւնը, որոնումէր օգուտ քաղել քո վատաբաղդութենից»։

Եւ երիտասարդ ասպետը սեղմեց Մաւրիտանացին իւր կուրծքի վերայ մի ֆրանսիացու ջերմութեամբ և կենդանութեամբ։

«Ասպետ, ասաց դօն կարլոսը իւր կողմից, իմ ակնկալութիւնս նոյնպէս էր ձեր հնչակաւոր ազգատոհմից։ Իբն Համեդ, ինչ նշանակ կարող էի ես ճանաչել ձեզ իրրև վերջին Իբն Սերրաջլանը։

—Իմ գնացքից, պատասխանեց Իբն Համեդը։

«Ես հիանում եմ դորա վերայ, ասաց Սպանիացին. բայց յառաջ քան թէ կը յայտնէի ձեզ իմ միտքը, ցոյց տուեցէք ինձ որ և իցէ նշան ձեր տոհմականութեան»։

Իբն Համեդը դուրս հանեց ծոցից Իբն Սարրաջեանց ժառանգական մատանին, որ կրում էր նա մի ոսկի շղթայի վերայ կապած։

Դօն Կարլոսը տեսանելով այս նշանը, պարզեց ձեռը դէպ ի վատաբաղդ Իբն Համեդը։ Պարոն Ասպետ, ասաց նա, ես համարում եմ ձեզ պատուելի մարդ և ճշմարիտ զաւակ թագաւորական տոհմի։ Դուք պատուում էք ինձ ձեր դիտաւորութեամբը դէպ ի իմ աղգատոհմը։ Ես ընդունում եմ այն պատերազմը որ դուք ծածկապէս եկել էիք որոնելու։ Եթէ ես յաղթուած կը լինիմ, այնուհետև իմ բոլոր կալուածքս, ձեր բոլոր կալուածքը մի ժամանակ, արդարութեամբ կը դարձուցանուին ձեզ։ Բայց եթէ դուք հրաժարվում էք պատերազմելու դիտաւորութենից, այնուհետև ընդունեցէք ինչ որ ես առաջարկում եմ ձեզ. Դարձէք քրիստոնեայ և հաւանացուցէք ձեզ իմ քոյրս, որ Լօտրիքը խնդրել է ձեր համար։

Վորձութիւնը մեծ էր, բայց նա Իբն Համեդի կարողութենից վեր չէր։ Եթէ սէրը իւր բոլոր աղդողութեամբ խօսում էր դէպ ի սիրտը Իբն Սերրաջեանի, միւս կողմից զարհուրելի էր նորան մտածել այն բանը որ էր միաւորել Հալածողների արիւնը Հալածուածների արիւնի հետ։ Նա պատկերացնում էր իւր աչքի առաջև, որպէս թէ իւր նախահօր ստուերը դուրս էր գալու գերեզմանից և յանդիմանելու էր նորան այս սրբապիղծ ամուսնութեան համար։ Սիրտը խոցուած ցաւից, ձայն արձակեց Իբն Համեդը. Ո՛ թէ պիտոյ էր ինձ հանդիպել այս տեղ այնքան վսեմ սրտերի և այնքան ազնիւ բնաւորութիւնների, որ այդպէս աւելի խոր զգայի իմ զրկանքի մեծութիւնը։ Թող Բլանքան վճռէ խնդիրը, թո՛ղ նա ասէ, թէ ինչ պէտք էր ինձ առնել, որ լինէի նորա սիրոյն աւելի արժանաւոր։

Բլանքան ձայն արձակեց. «Վերադարձիր դէպ ի անապատը» և նա աներևութացաւ։

Իբն Համեդը տարածուեցաւ գետնի վերայ, պաշտեց նորան գերերկնային կերպով, և դուրս գնաց առանց որ և իցէ խօսք հանելու բերանից։ Նոյն իսկ դիշերին ուղևորուեցաւ նա դէպ ի Մալագա և նաւամուտ եղաւ մի նաւի մէջ, որ պիտի քերէր Օրանի մօտից։ Այս քաղաքի մերձակայքում գտաւ նա իջևանած մի կարաւան որ երեք տարին միանգամ դուրս է գալիս Մարոքկոյից, անցանելով Աֆրիկայի միջից դիմումէ դէպ ի Եգիպտոս, և եմանում միաւորվում ուխտաւորների կարաւանի հետ դէպ ի Մէքքա։ Իբն Համեդը ընկեր դարձաւ այս ուխտագնացներին։

Բլանքան, որի օրերը սկզբումը վտանգի տակ էին, վերստին զուարթացաւ։ Լօտրիքը հաւատարիմ մնալով իւր խօսքին որ տուել էր Իբն Սերրաջեանին, հեռացաւ. երբէք մի խօսք իւր սիրոյ կամ ցաւի մասին չխաո-

նակեց Սանտա-Ֆեի դուքսի աղջկայ ամուսնութիւնը։ Ամեն տարի Բլանքան երթուէր մեռնելու Մալագայի սարերի վերայ, այն միջոցին, երբ իւր սիրականը սովորութիւն ունէր վերադառնալու Աֆրիկայից. նա նստուէր ապառաժ սարերի վերայ, նայուէր ծովին, հեռաւոր նաւերին, և ապա յետ էր գալիս դէպ ի Գրենադա։ Նա անցուցանուէր իւր օրերի մնացորդը Ալհամբրայի աւերակների մէջ։ Նա չէր դանդատուէր, չէր արտասվուէր. նա երբէք խօսուէր չէր Իլն Համեդի վերայ. մի օտար մարդ կարծելու էր նորան երջանիկ։ Իւր ադատոհմից մնաց նա միայն։ Նորա հայրը մեռաւ աղէտքից և դէն կարլոսը սպանուեցաւ մի մենամարտութեան մէջ, որին Լօտրեքը դատանուել էր ընթերակաց (ներկայ)։ Երբէք չէ իմացուած, թէ Իլն Համեդի վերջը ինչպէս եղաւ։

Երբ որ դու դուրս ես գալիս Թունիսի այն դարպասից որ տանում դէպ ի քարկեդոնի աւերակքը, գտանուէս մի գերեզմանատուն մի արմաւենու հովանաւորութեան տակ. այս գերեզմանատան մի անկիւնում ցոյց են տուել ինձ մի գերեզման, որին ասում են «Վերջին Իլն Սերրաջեանի գերեզման։» Դա չունի ոչինչ արժանի ուշադրութեան. գերեզմանաքարը ամենևին տափակ է. միայն թէ ըստ սովորութեան Մաւրիտանացոց, այդ քարի մէջ քանդակել են մի փոքրիկ խորութիւն։ Անձրևի ջուրը հաւաքվում այդ դամբանական բաժակի մէջ, և մի այրուն ջերմ աշխարհում սպասաւորում որպէս աղբիւր հանգցնելու երկնքի թռչունների ծարաւը։

ՎԵՐՋ.

Ս. Նալբեանց։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ.

* * *

Ընջան, գնացին մի մի շատ դարեր,
Ինչպէս հետ ղհետէ ջրի ալիքներ,
Մարդիկ ալեաց մէջ լացով, ծիծաղով
Դէպ ի մահ, շիրիմ վազեցին շտապով։

Ո՞վ մահկանացու, արդէն պատռանդան
Մեր այս լուսաւոր դարն է քեզ դարձել.
Կարող ես արդեօք, ասա, բաց լուծել
Խորհուրդը կեանքի, այլև բնութեան։

Ո՜հ, շատ յուսով ես վերապ, քո մասին,
Եւ գուշակաբար ատեան ես կանչում
Ստուերները ներկայ, անցած դարերին,
Եւ ապագային անվհեր ապատում։

Բայց ո՛չ. և դու ես մի ստեղծուած անզօր
Եւ ժամանակի գնացքի հետ միասին,
Ինչպէս ալեաց մէջ ձգած մի խնձոր,
Գնում ես ակամայ, կարծելով ինքնին։

Ռուբէն Հասան-Ջալալեանց։

ԿԵԱՆՔ.

Հ՚տապումէ արեւը դէպ ի իւր մուտը,
Ես, կանգնած, վերան նայումեմ տրտում:
Արդէն մռաւ մայր, վըայ հասաւ մութը,
Վ՚շտալի մտքեր անձնս են պատում:

Ե՛ւ դու նման ես, կեանք իմ, արեւին.
Ա՛յսօր փայլումէ նա նշոյլներով,
Դու վայելումես օրերը Թանկագին.
Մ՚իւս օր ծածկվումէ խաւար ամպերով,
Եւ դու տեսնումես օրեր դառնագին:

Բայց նա ի նորոյ կ՚ելանէ վաղը
Եւ կը կատարէ իւրեան շրջանը,
Սակայն, ո՛վ կեանք իմ, հողն ու դագաղը
Են քեզ մուտք միակ և քո սահմանը:

Ռուբէն Հասան-Ջալալեանց:

ՆԱՄԱԿ ԱՌ ՀՐԱՏԱՐԱԿՈՂԸ.

ՈՂՈՐՄԱԾ ՊԱՐՈՆ.

«Սիրելի է ինձ Պլատոն, բայց
ճշմարտութիւնը ևս առաւել»։

Մեզ կամենումն հաւատացնել որ երկու անգամ երկուսը չորս չէ, մի այլ թիւ է, և հաղիւ թէ չեն համարձակվում պահանջել մեզանից մի մեռեալ և կոյր լուռթիւն, որ միայն յատկութիւն է այնպիսի մարդու, որ իւր բանական արժանաւորութիւնը արհամարհելով, չորքոտանի կամի լինել։ Մեզ կամենումն հաւատացնել թէ Մարտիրոսը կիրակոսի բարերարն է և խնամատարը, փիլիպոսը այս ինչ քաջութիւն գործեց, Մարկոսը երկինքը համբարձաւ, և այլն. երբ որ անաչառ ականատեսները խմանումն, որ ոչ միևը դոցանից չէ ճշմարիտ, այլ բոլորը մի չոր ուղղի հնարած բաներ են։

Ողորմած Պարոն, նորերումն ձեռս հասաւ մի գիրք, տպուած Թիֆլիզում այսպիսի վերնագրով «Տեսութիւն տասնամեայ Գործողութեանց և Հաշուոց Հոգաբարձուաց Ներսիսեան Հայոց Հոգևոր ուսումնարանին Տըփխիսայ ի 1851—ց1861 ամն»։

Ես դիրքը թերթելով և տեղ տեղ աչքիս տակից անցնելով ջարմացայ, որ մինչև անգամ մեր գարումը ևս բանագէտ ժողովրդի աչքին փոշի ցանելով կամենումն շլացնել նորանց, և պատրուակեալ խրատիւլակը ձեւացնել նորան իրրև մի զգայուն կենդանի։ Ուսումնարանի ներքին կառավարութիւնը, հաշուարարութիւնը և այլ հանգամանքը թողնելով գործի հետ աւելի մօտ ծանօթ պարոնների անաչառ քննողութեանը, ես համարձակվումեմ ընդդիմանալ մի քանի իրողութեանց միայն, ըստ որում իմ աշակերտական անփորձութիւնս միւս հանգամանքների մէջ արգելք են լինում ինձ խօսելու։

Ինչպէս, գուցէ այս նամակով ևս զինաւորելու էի իմ դէմ Ներսիսեան դպրոցի պատուելի Հոգաբարձուներին, բայց աչքիս առաջ ունենալով ճշմարտութիւնը, մի սառն արհամարհանք եմ զգում դէպ ի պատուելի Հոգաբարձուաց ասածը իւրեանց սպառնական յառաջաբանի մէջ «Մեզ չէ պարտ ցաւել, թէ «ինչ» ումանք արտաքուստ, գուցէ և ի ներքուստ ընդ ձեռամբ մերով եղեալք, քարինս անարգանաց արձակիցին ի վերայ և զտասանամեայ անարատ ծառայութիւն մեր մեծամեծ շահիւք և արդեամբք, առոյն հարկանիցին»։

Պատուելի Հոգաբարձուաց կարծիքով թէղ «ինչ» լինին նոքա, որոնք համարձակուէին մեղադրել նոցա մի բանում ևս, բայց մեք աւելի պատրաստ ենք այդ պատուանունը ժառանգել, քան թէ մեր անձը թողնել մի պարտաւորութեան տակ, ինչպէս պատուելի Հոգաբարձուքը բարեհաճել են հրատարակել իւրեանց հաշուեկռքի մէջ։ Վասն որոյ թէղ վերհանձնաբար ներեն մեզ, եթէ մի քանի նկատմունք կամիմք առնել նոցա գրքի վերայ։ Պատուելի Հոգաբարձուքը գրքի վերջումը արձանացնելով Ներսիսեան դպրոցի որդեգրների անունները և տղերը թուով 86, մուծանումեն այս ցուցակի մէջ և այնպիսի երեւելի աշակերտ, որ ոչ թէ եղած չէ որդեգիր, այլ պանսիոնումը հաց ևս չէ կերած գոնէ միանգամ։ Բայց այս թողնենք առ ժամանակ և մի հայեացք արձակենք դէպ ի այն որդեգիրները, որոնք պատուելի Հոգաբարձուաց կարծիքով կուրսը աւարտելով, ստացել են առնաստատ կամ վկայական։ Ուսումնարանի որդեգրների մնալն եղած խօսակցութիւնը իմանալու համար նախ և յառաջ հարկաւոր է ծանուցանել, որ Ներսիսեան ուսումնարանը 1858 թուին (և կարծեօք այժմ ևս) ունէր միայն երեք դասատուն, չհիշելով նախակրթարանը կամ պատրաստականը։ Այժ եթէ պատրաստականը ընդունենք առաջին դասատան տեղ — լինում չորս դասատուն։ Այժմ պատուելի Հոգաբարձուք, չենք իմանում, ի՞նչ պատճառով հիշումեն չորս դասատուն բաց ի նախակրթարանը, կամ գուցէ նոր են յաւելացրել թէղ իւրեանք վկայենք։ Այս մի և նոյն կարգով հրատարակուած էր և 1859 ին կաթուղիկոսի պցիալութեան հանդիսի մէջ։ Վասն որոյ այժմ աւելորդ չենք համարում հիշել մի քանի կուրսը չաւարտած որդեգրների տգղերը պատուելի Հոգաբարձուաց ասածին ընդդէմ։ Եւ թէղ ներեն մեզ այն որդեգիրները, որոնց պատիւը պաշտպանելու համար կամենումենք հանդէս հանել նորանց։ Առաջին պարագլուխը այս հանդիսի մէջ պ. Յարութիւն Ափեանցն է, Թիֆլիզեցի, որ Թատրոնական... և աւ... կեանքովը կարող էր բարի օրինակ լինել իւրապէսնեորին։ Բայց նախանձամոլութիւնը գիտալով նորան, ցոյց տուեց մի այլ ճանապարհ, այն է թողնել իւր չգիտեցածը երիտասարդ դասատան մէջ և հրաժարական տալ ուսումնարանին, առանց վկայագրի։ Ահա այս պարոնը այսօր մտանէ ուսումնարանների կարգը և վինչև անգամ վկայագիր ևս ստացած է։ Գուցէ (շատ կարելի է) այս արտօնութիւնը

նա ստացել է միայն նորա համար, որ եղել է Պ. Հոդաբարձու Թայիրեանցի որդեդիրը։ Ո՞վ կ'ցանկանայ իւր մի աչքը կուրացնել։

Երկրորդ, Ասլան Աւագեանց Գուրջանեցի, նոյնպէս էջմիադզին դաստան աշակերտ, 1858 ի ամառը գնալով իւր Հայրենիքը, այն տեղ վախճանուել է, բայց այս օր դասուած է ուսումնասիրասիրների կարգումը, ստանալով առեստատ ևս։ Գուցէ թէ նա լինի նորան փոխանցաթուղթ դէպ ի այն աշխարհը։ Երրորդ, Թևլուեցի Գէորգ Բաղդասարեանցը, որ 1858 ին նոյնպէս երկրորդ դասատունից, առանց որ և իցէ վկայականի գալով Մոսկվա, այժմ ուսանում է Լազարեանց Ճեմարանումը. բայց պատուելի Հոդաբարձութեան աւելով, նա աւարտել է իւր կուրսը առեստատով։ Չորրորդ, Պ. Չերքեզահայ Սարգիս Յովհաննիսեանց Արմաւրեցի նոյնպէս էջմիադզնից 1858 թուականին, հանգամանքների պատճառով թողեց ուսումնարանը և գնաց Հայրենիքը. և այլն, և այլն, և այլն։ Պատուելի Հոդաբարձութիւնը ահա սոցա և այլ սոցա նմանների ազգերը հրատարակելով, գրքի քամակումը ծանօթութեան մէջ յաւելացնում «Վերոյիշեալ որդեդիրը կամ ժառանգաւորը, որպէս երևի՝ ի տեղւոյ թեանց գիւանական գործոց Հոգաբարձական կառավարութեան ուսումնարանի, սնեալ և ուսեալ ի հաշիւ նորին վէճ առած ի նմին ընթացս ուսմանց յետ կարգաւորեալ հարցաքննութեանց ըստ եղբակացութեան Հոգաբարձութեան արձակեալ են խրաքանչիւրքն ըստ արժանաւորութեանց իւրեանց [անձնաւորեալ վիճակի]»։ Ո՞ր համալսարանում, ո՞ր գիմնազիայում, կամ ո՞ր ուսումնարանումը աշակերտը դուրս գալով ստորին դասատներից կ'յիշուի իբրև ուսումնասիրատ։ Կարծեաք ոչ միտումը։ Բայց Ներսիսեան դպրոցումը այս բանը ոչ միայն կարող է լինել, այլ այդպիսիները կ'արժանան առեստատի ևս։ Եթէ ասածներիս մէջ կայ կամ չարախօսութիւն կամ ստաբանութիւն դէպ ի Պ. Հոգաբարձութիւնը, թո՛ղ գրականական հանդէս դուրս բերէ, այն ժամանակը և մեր մեր կողմից գուցէ ոչինչ թուլութիւն չենք զգալու հատուցումն տալ նորա պահանջողութեանը։ Մեր կարգացողից համբերութիւն խնդրելով, կրկին դառնանք դէպ ի առաջին խնդիրը։ Ուսումնասիրատ որդեդրաց կարգումը, ինչպէս վերևը ասացինք, մեծ կայ և այնպիսի երթևեկ աշակերտ, որ ոչ մի օր անգամ չէ եղած դպրոցի պանսիոնեումը։ Բայց պատուելի Հոգաբարձուաց ընորհիւը այդ պարոնը, ոչ թէ այնքան տարի կերել է պանսիօնի հացը, հագել է շորը և սովորել է նորա պատկանելի գրեանց վերայ, այլև ուսումն աւարտելուց յետոյ ստացել է առեստատ, որի մասին կ'խօսենք մօրը ինչ յետոյ։ Այս պարոնը ինքը Գաբրիել Տէր Յովհաննիսեանցն է։ Մենք կարծումենք, որ պատուելի Հոգաբարձուքը (դիցուք) սխալմամբ Պ. Տէր Յովհաննիսեանցի եղբօր փոխանակ նորա անունն են հրատարակել, բայց ի՞նչպէս է կարելի, երբ մի և նոյն ժամանակ նորա եղբօր անունն ևս կայ տպած. կամ, գուցէ մտածել են, թէ նորա մի են, բայց երկու անձն։ Միով բանիւ այդ աստուածաբանական

խնդիրը Թողնենք պ. Հոգաբարձուաց վճռողութեանը։ Այսու ամենայնիւ սորանից չէ կարելի եզրակացնել, որ պ. Գաբրիէլ Տէր Յովաննիսեանցը անել և ասել է ի հաշիւ նորին. այն է հոգաբարձական կառավարութեան ուսումնարանի։ Այլ ի՞նչ ասենք նորա մասին, որ ծանօթութեան մէջ ասած է»... արձակեալ են իւրաքանչիւրքն ըստ արժանաւորութեանց իւրեանց յանձնաժողով վկայութիւն»։ Երևի, պատուելի հոգաբարձուք մոռացել են, կամ զանց են արել Տէր Յովաննիսեանցի խնդիրը Մոսկվայից արձակած 1858 ամի նոյեմբերի 20 դէպ ի հոգաբարձութիւնը ներսիսեան դպրոցի։ Ապա ի՞նչ պատճառով մինչև այժմ լուռ են մնացել և չկամին պատասխանել։ Մեք կարծումենք, որ եթէ պ. Տէր Յովաննիսեանցի ընկերքը մի և նոյն դասատան մէջ (վերջին չորրորդ) կ'ստանան ատեստատ, ապա ուրեմն աւելորդ էր նորան բացատրութիւն կաղմել։ Եթէ պատուելի հոգաբարձուքը կ'ասեն թէ Գաբրիէլ Տէր Յովաննիսեանցը չէ սպասել մինչև հրապարակական հարցաքննութիւնը, այն ժամանակը մեք կ'հրատարակենք շատ այդպիսի օրինակներ, որ որդեգիրը առանց որ և իցէ հարցաքննութեան, թէ առանձին և թէ հրապարակական, ստացել է իւր ատեստատը նոյն իսկ հոգաբարձուներից։ Միայն թող փորձէին նորա մերժել մեր ասածը, որ նոցա կառավարութեան մէջ չէ պատահած այդպիսի օրինակ, այն ժամանակ մեք կ'խոսենք նոցա հետ նոյնպէս հրապարակով։ Եւ այսպէս, ողորմած պարոն, թող սորանով վերջացնեմ իմ նամակը, ընդելով, որ շատ բան դեռևս կայ խոսելու, բայց ժամանակի կարճութեան պատճառով թողումեմ մինչև ապագայ օրերը։

Մնամ յարգող Ձեզ

Գաբրիէլ Տէր Յովաննիսեանց։

Մոսկվա, 1862 թ.
Յունիսի 20։